

ՄԱՐԶԻԿ

مارزيك

مجلة رياضية شهيرة

تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

30րդ Տ.ԲԻ, 2011, ԹԻԻ 1-3 (343-345) - VOL. XXX N° 1-3 السنة الثلاثون - العدد الأول - الثالث

262

ՄԱՐՄՆԱՄԱՐԳ

ԿՈՉ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Նախատեսում էր մէջ, նպատակ ունենալով զգուշացնել հասարակական մտայնության մարմնավարդարան մը հիմնել, երբ-տասարդութիւնը գինետունները, սրճարանները և նանրատունները հետաքննել ու խառնելու օտարազգայինները հայ սանձամերս:


Արեւու գերութիւնով սպնտակուն հրէշային զոյգ ազգի մը համար միտիմարական էր, ձեռնարկին համար դրէ էր: Երբ չպիտի յուսահատին, յարգանքով թէ ազգայնաց, ուրախանալով, որպէս ինչ որ ծախանար իր արմը ուղղակի իր տուն, իր ապագային հայ ազգը վեր դարձրելու իմանքը համար իրար իման մեծաւորը զամէլ, հայը կասկածուած արեւին և թէ ուղղակի կատարած ձեռնարկով մէկ րան միայն կը պիտի չէր, որպէս իմ իմիւր, արտասպասումն յանդերձ որ ինք պիտի լինէր Ազգիբնական հերկայիս կը ու մանաւանդ թէ Թ



ՏՆՅՎԱԿԱՆ ՈՒԻՐԲԻՎԱՆ

1911 ԱՊՐԻԼ


Տեղեր, սինո՛ւս՛ սմ՛ որ ծնունդ կ'ունեն: Եւ կայ երեսասարդութեան զարթոնումն է, որ սխալու է, որ սխալու է: Ան, որ միջին հարկերով զոյգ կասար իր միջին ու սխալու կ'ունեն իր արմը ուղղակի կատարած ձեռնարկով մէկ րան միայն կը պիտի չէր, որպէս իմ իմիւր, արտասպասումն յանդերձ որ ինք պիտի լինէր Ազգիբնական հերկայիս կը ու մանաւանդ թէ Թ




ՄԱՐՄՆԱՄԱՐԳԸ ՀԱՅՂԱՐՋԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

1911 ՕԳՈՍՏՈՍ

Ժամանակը եկած էր համարեակի կատարման ցրտեղութեան արմը ուղղակի կատարած ձեռնարկով մէկ րան միայն կը պիտի չէր, որպէս իմ իմիւր, արտասպասումն յանդերձ որ ինք պիտի լինէր Ազգիբնական հերկայիս կը ու մանաւանդ թէ Թ





ԱՌԱՋԻՆ ԽՕՍՔ



Այնպէս համազուած ենք ու պատմական փաստեր ունինք ուրիշներն ալ համագելութէ, այն ազգերը սրտնք կ'ուզին իրենց գոյութիւնը ապահովել, բարգաւաճիլ ու զարգանալ, բլլայ վաճառականութեան, բլլայ գլխաւթեանց և ուսմանց մէջ, պարտաւոր են միտքն ու մարմինը իչք ամբողջ մը նկատել ու ըստ այնմ երկուքն ալ հաւտարապէս զարգացնել :

Սանձանադրութենէն տալին զանազան թերթեր, մանաւանդ պարբերականներ հրատարակուեցան, առնցով, շատերուն անունն անգամ մտցած ենք, ու իրենց չկարենալ շարունակելը շատ բնական էր, սրովհետեւ ասորքեր անուններու տակ դրեթէ նախ նիւթի մը կրկնութիւնն էին և ուրիշ ոչինչ :

Մենք սակաւին ոչ մէկ թերթ տեսնեք որ մեր նօրմալ կեանքին մէջ կրթիչ նորութիւն մը մտցնելու նկրտէր, ցաւով կ'ըսենք թէ սակաւին դատախարակութեան համար այքան կարեւոր ու ազդի մը ապագային մտաին այնքան անհրաժեշտ մանկավարժական թերթի մը հրատարակութիւն :

Հարիրամեայ «Մարմնամարզ»ի առաջին քիւին առաջնորդող խօսքը (Ամբողջութիւնը կարդալ էջ 13):



ԹԻԼԻՆ ՆԻԼՆԵՐԸ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 سارزىك مجلة رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



Սարգական ամսաթիթ
 Գրատարակութիւն՝ Գ.Ս.Ը.Ս.ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
 30ՐԴ ՏԱՐԻ, 2011, ԹԻ 1-3 (343-345)

ԽՄԲԱԳԻՐ
 Վիգէն Աւագեան
 ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍ
 Սեդա Պէշլեան, Սեւան Նազարեան

«ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
 Պատրիկ Կիւլպէնկեան
 Աթո Մոսիկեան
 Գօգօ Սկրտիչեան
 Վահան Դամամճեան
 Տիրան Շահինեան
 Սալբի ճէճէեան
 Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ
 Միհրան Շիմշիրեան, Վարուժան
 Սերոբեան, Ժիրայր Սարգիսեան,
 Ներսէս Արք. Բախտիկեան*,
 Յարութ Շէրնէգեան, Գ. Թորոյեան,
 Շաղիկ Գէորգեան եւ շրջաններու
 թղթակիցներ:
 Էջադրում - Արշօ Պալեան
 Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍՅԷ
 Պուրճ Դամուտ, ճինիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Դեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՑՐՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատավաճառի սակն է 3000 Լ.ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ճշդուած է 35000 Լ.ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Գ.Ս.Ը.Ս.ի Մեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$50,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):



Գ.Ս.Ը.Ս.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Անդրադարձ 3
- Դեռանկար 14
- Ակնարկ 18
- Յուշեր 18
- Պատմութիւն 20
- Մեր տեսակցութիւնները 23
- Մասնաճիւղէ Մասնաճիւղ 27



ՔԱԺԻՆՆԵՐ

- Միջազգային 25
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Դայեացքով 40





Հ Ա Յ Կ Ա Ս Տ Ա Ն Ի
Ի Ս Տ Ո Ր Ի Ա
Կ Ա Ն Ա Տ Ա Ն Ի
Կ Ե Ն Տ Ր Ո Ն

«ՄԱՐԴԻ ԴԱՏՐԱՍՏԵԼ...»

Պարզ թելադրանք է մը շատ անելին է «Մարմնամարզ»ի էջերէն, դար մը առաջ, Շաւարշ Քրիսեանի արձակած կոչը. «Մարդ պատրաստել... մարդեր են որ մեզի կը պակսին»: Հայ երիտասարդութիւնը մարզանքի միջոցով ազգային-քաղաքացիական գիտակցութեան առաջնորդելու հրաւեր մըն է ան, ազգապահպանման ծրագիր մը, որուն առջեւ կ'արժէ կանգ առնել այսօր, «Մարմնամարզ»ի հիմնադրութեան 100ամեակի ոգեկոչման առիթով:

«Մարմնամարզ» հայ մարզական առաջին թերթն է, Քրիսեան՝ անոր գլխաւոր խմբագիրն ու հրատարակիչը, որ համազգային շարժում մը ստեղծելու ճիգով, 1911ին կը ձեռնարկէ «Մարմնամարզ»ի հրատարակութեան: Թերթը նոր աւիշ կը ներարկէ հայ երիտասարդութեան, իր շուրջ կը համախմբէ բոլորը եւ իր գաղափարներով հրատապ պահանջ կը դարձնէ ֆիզիքական դաստիարակութեան անհրաժեշտութիւնը հայութեան մէջ:

«Մարմնամարզ»ի հրատարակութեան չորս տարիները բաւարար կ'ըլլան, որ դարերու ստրկութեան տակ կքած հայր անդրադառնայ իր երիտասարդութեան ապրած մտային, բարոյական եւ հոգեկան նահանջին եւ վերակենդանացնէ հին յոյներու իտէալը. «Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ»: Թերթը կը յաջողի հաճոյքի եւ ժամանցի նպատակով կատարուած գործի մը տալ կենսական եւ համազգային հանգամանք:

«Մարմնամարզ» կ'ըլլայ այն հիմնաքարը, որուն վրայ կը կառուցուի հայ մարզական եւ սկաուտական շէնքը: «Մարմնամարզ»ի էջերը թղթատելով՝ հիացմունքով կարելի է տեսնել Շաւարշ Քրիսեանի եւ իր գործակիցներուն քաջութիւնը, հեռատեսութիւնը եւ հաւատքը նոր կազմաւորուող սկաուտական եւ մարզական շարժումներուն հանդէպ:

Մեծ կ'ըլլայ «Մարմնամարզ»ի նըպաստը Հ.Մ.Ը.Մ.ի ստեղծման երկունքին: Թէեւ թերթն ու հիմնադիրը չեն տեսներ իրենց երազած միութեան ծնունդը, սակայն անոնք ներշնչման աղբիւր կը հան-

դիսանան Հ.Մ.Ը.Մ.ական իրերայաջորդ սերունդներու, որոնք ահա, 93 տարիէ, կառչած կը մնան «մարդ պատրաստել»-ու անոնց կոչին, միութեանական խոր հաւատքով եւ ազգային պատասխանատուութեան գիտակցութեամբ:

Այսօր, դարու մը կեանք ունի Քրիսեանի կոչը: Հին է, բայց ոչ՝ հինցած: Անելի քան երբեք այժմեական կը հնչէ ան, որովհետեւ բոլորս կը զգանք ու կ'անդրադառնանք, որ քիչ մը ամէն տեղ մենք կարիքը ունինք Քրիսեանի տեսլականով մարդոց, որոնք նկարագիր ունենան, պատիւ ունենան, բարոյակա՛ն ունենան:

Կ'ապրինք փորձութեան ժամանակներու մէջ. անհոգութիւն, թմրամոլութիւն, անբարոյութիւն, վայրագութիւն, խարդախութիւն, ընկերային վարակիչ ու քանդիչ տեսակաւոր իրավիճակներ կը պարզուին մեր դիմաց եւ կը շեշտեն միութեանական պատրաստութեամբ կորովի, առողջ ու յանձնառու երիտասարդութեան մը ներկայութիւնը մեր շուրջ:

Քրիսեանի կոչը անարձագանգ չի կրնար մնալ. հարկ է հոգեկան եւ մարմնական դաստիարակութեամբ պատրաստել մարդիկ, որոնք բարոյական պատմէշ ըլլան այս անտարբեր եւ միթապաշտ աշխարհին մէջ, եղբայրական սիրով, հասկացողութեամբ, հանդուրժողութեամբ, պարզութեամբ, քաղաքավարութեամբ, պարկեշտութեամբ եւ հասունութեամբ:

Հարկ է պատրաստել մարդիկ, որոնք գիտնան սուտին եւ ճշմարիտին, չարին եւ բարիին, սեւին եւ սպիտակին տարբերութիւնը, տէր ըլլան անձնական համոզումի, եւ ի՛նչ վնասներու ալ հանդիպին, ունենան կեանքի փիլիսոփայութիւն մը, որ ըլլայ վարքի եւ նկարագրի փիլիսոփայութիւն:

«Մարդ պատրաստել»-ու մարտահրաւերը մեր օրերու ամենասուր պահանջն է, որուն պէտք է ընդառաջել անվարան, ի խնդիր մեր նորահաս սերունդներու փրկութեան, ի նպաստ ազգային մեր ինքնագիտակցութեան ամրապնդման եւ զարգացման:

«Մարմնամարզ»ի պատգամն է այս, երէկ, այսօր եւ վաղը:


ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԱՌՋԻՆԵԿԸ 100 ՏԱՐԵԿԱՆ

«ՄԱՐՄՆԱՄԱՐԶ» ԵՐԵՒՈՅԹԸ ԵՒ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

2011ը կը նշէ հայ մարզական առաջին թերթին՝ «Մարմնամարզ»ի հրատարակութեան 100ամեակը:

Մենք է «Մարմնամարզի» դերն ու առաքելութիւնը 20րդ դարու սկիզբը, հայ մարզական եւ սկաուտական շարժումներու զարգացման եւ անոնց պսակադրումը հանդիսացող Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան ստեղծման մէջ: Առ այդ, «Մարզիկ» այս թիւով լուսարձակի տակ կ'առնէ «Մարմնամարզ»ի երեւոյթը եւ առաքելութիւնը հայ կեանքէն ներս, ընթերցողներուն ներկայացնելով արժէքաւոր երկու գրութիւններ, առաջինը՝ Շ.Ս.Ը.Մ.ի պատմագիր Բիւզանդ Թորիկեանի գրիչով, իսկ երկրորդը՝ հայ մարզական պատմութեան հայրենի մասնագետ Հայկ Դեմոյեանի հեղինակութեամբ:

Չոյգ գրութիւնները առաջին անգամ լոյս տեսած են «Պատմութիւն Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան» Ա. հատորին (էջ 19-24) եւ «Հայկական սպորտը եւ մարմնակրթութիւնը Օսմանեան կայսրութիւնում» գիրքին մէջ (էջ 46-51):



1911 ի Փետրուարին, Շաւարշ Քրիսեան կը յաջողի լոյս ընծայել այնքան սպասուող եւ իր տեսակին մէջ եզակի հրատարակութիւն մը՝ «Մարմնամարզ» ամսաթերթը: Իրեն անմիջական գործակից՝ Գրիգոր Յակոբեան ձեռնարկին բարոյական քաջալերանքին կողքին կը բերէ նաեւ իր նիւթական աջակցութիւնը: Քաջալերական նոյն կեցուածքը ցոյց ու տայ Յ. Ճ. Սիրունին, օժանդակելով նաեւ առաջին թիւերու խմբագրութեան: Մարզական հանդէսը ճամբայ կ'ելլէ չդադրելու առաջադրանքով:

«Մարմնամարզ»ի արտօնատէր Շաւարշ Քրիսեան նաեւ խմբագրապետ է եւ գլխաւոր յօդուածագիր: Առաջին թիւին մէջ Քրիսեան կը ստորագրէ խմբագրականի կողքին հինգ յօդուածներ, ամբողջացնելով թերթի 32 էջերուն 23ը: Այս նախաձեռնութեան նեցուկը կը հանդիսանան յօդուածագիրներ Յովհաննէս Հինդլեան, տղթ. Գարանֆիլեան, Արամ Նիկողոսեան, Լեւոն Յակոբեան, որոնք առաջին օրէն սկսեալ անվերապահօրէն կը բողոքուին խմբագրութեան շուրջ: Թերթի վարչական տնօրէն-պատասխանատուն է Կ. Ունձեան: Հետըզհետէ, ամսաթերթին որպէս աշխատակիցներ կ'օժանդակեն Կարօ Ուշագլեան, Յակոբ Քրիսեան, Վահրամ Ս. Փափագեան, Յ. Տէր Յակոբեան, Արծիւեան, Վահրամ Արծրունի, Հմայեակ Յ. Չարդարեան, Ստեփան Խանձեան, Հայկ Առաքելեան, Տ. Մարտիրոսեան, Եղնիկ Քաջունի, Երուանդ Համբարձումեան, տղթ. Կ. Փաշայեան, Սարգիս Թարիգեան, Արմաւենի Ժամկոչեան, տղթ. Յ. Աբրահամեան, տղթ. Մ. Ժամկոչեան եւ ուրիշներ, թերթը վերածելով սիրուած ու

փնտռուած հրատարակութեան մը:

«Մարմնամարզ» լոյս կը տեսնէ առաջին տարին որպէս ամսաթերթ, 10 թիւերով, 1911ի Փետրուարէն մինչեւ Նոյեմբեր, իւրաքանչիւր թիւ 32 էջ: Յոր թիւէն սկսեալ ան կը կոչուի «Պատկերազարդ ամսաթերթ»: Ապա, ընթերցողներու փափաքին ընդառաջելով, երկրորդ տարին կը վերածուի կիսամսեայ հանդէսի, 24 թիւերով, 1912ի Յունուարէն մինչեւ Դեկտեմբեր: Առաջին 5 եւ վերջին 4 թիւերը 16ական էջ, թիւ 6էն 20ը՝ էջերու թիւը կը բարձրանայ 20ի: «Մարմնամարզ»ը կը կոչուի «Օրկան ազգային ֆիզիքական վերածնութեան», ապա՝ «Օրկան ազգային ֆիզիքական կրթութեան»:

Երրորդ տարին լոյս կը տեսնէ 12 թիւ՝ 20ական էջ, իսկ չորրորդ տարին, որոշ յապաղումէ ետք, 1914ի Մայիսին եւ Յունիսին միայն 2 թիւ, 32ական էջ:

Թերթը կը տպուի Ա. Տարի թիւ 1 եւ Բ. տարի թիւ 1-6՝ տպարան «Շանթ»: Ա. տարի թիւ 2 եւ Բ. տարի թիւ 14-20՝ տպարան «Օ. Արզուման»: Ա. տարի թիւ 3-10՝ տպարան «Թիրեաքեան», Բ. տարի թիւ 7-14 եւ 21-24՝ տպարան «Կ. Քէչիլեան որդիք»: Գ. տարին՝ տպարան «Գ. Պաղտատեան»ով սկսած՝ կ'աւարտէ տպարան «Արզուման»ով: Դ. տարին՝ տպարան «Ն. Կ. Պապիկեան»:

«Մարմնամարզ»ի պաշտօնական հասցէն՝ թիւ 6, Հալէպ Խան, Կալաթա, առաջին տարիէն փոփոխութեան կ'ենթարկուի: Նախ կը փոխուի նամակատուի թիւ 81ի, Կալաթա: Բ. եւ Գ. տարիներուն՝ 1912 եւ 1913, Եէնի Վոյլթօ Խան, թիւ 19, Պահազէ Գաբու: Դ. տարին՝ Սեպուհեան Խան, թիւ 34, Չաքմաքըր լար:

ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԿԻՍԱՄՍԵԱՑ ՀԱՆԴԵՍ

ԵՊ

ՕՐԻՆՆ ԱՋԳԱՅԻՆ ՁԻՋԻԳԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ

Բ. ՏԱՐԻ — ԹԻԻ 5 ԳԻՆ 40 ՓԱՐԱՅ 1912 ՄԱՐՏ 1

ՄԵՐ ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԵԾԱԳՈՅՆ ՄԻԱԼԸ

Անհատապետ ամէն վարժարան իրեն եւ իր ուսուցչական կազմին յասուկ մանկավարժական րմբոնումներու համաձայն կ'ընթանայ, ու այն վարժարանները որոնք գուրկ են այդպիսի սկզբունքներէ, իննիսն արդէն կը դադրին դարոց նուիրական եւ վսեմ անուր արդարացնելէ, եւ կը դառնան պարզապէս մէյմէկ խանութ, ուր խառն ի խառն վիճակի մէջ ամէն բան կարելի է գտնել, առանց սակայն որոշ բան մը գտնելու ըլլալու գոհունակութեան. այս անգամ մեր նպատակը չէ մէկ կամ միւս խումբին պատկանող վարժարաններուն բաղդատութիւնը ընել, այլ կ'ուզենք մասնաւոր ընել մանկավարժութեան անուան ճակ գործող այն հակամանկավարժական սխալները, որոնք ամէն օր, ամէն ժամ կը գործուին ի վնաս Հայ պատանակութեան թէ Ֆիզիքական եւ թէ մատուցական զարգացման:

Բացէ ի բաց ու դասասուի մը յասուկ անկեղծութեամբ, պարս կ'ըզգանք յայտարարել թէ հայ ուսուցիչները ստուար մեծամասնութեամբ մանկավարժութեան որոշ բան մը չեն հասկնար, ու այն ամէն բաները որոնք այդ անունով կը կատարուին, ապրիլէն անդիլէն պարբերաբար փոխ առնուած գաղափարներու աղբիւնք են:

Հանդիմով կը յայտարարենք թէ ունինք շատ կարող մանկավարժներ, բայց միեւնոյն ատեն մեր կարծիքով սխալ մը կը գտնենք անոնց մեծագոյն մասերն հետեւած ուղղութեան մէջ:

Տպարաններու եւ խմբագրատան հասցէներու այս փոփոխութիւնները ցոյց կու տան, որ հրատարակութիւնը նիւթական եւ գործնական դժուարին պայմաններու տակ է որ կ'իրականանայ, ինչպէս կը վկայեն կարգ մը թիւերու մէջ երեւցող ազդարարութիւններ եւ խմբագրականներ: Այսուհանդերձ, համաշխարհային առաջին պատերազմն է որ պատճառ պիտի ըլլայ «Մարմնամարզ»ի հրատարակութեան դադարեցման:

«ՄԱՐՄՆԱՄԱՐԶ»Ի ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

«Մարմնամարզ»ի առաքելութեան պատուանդանները, շատ բնականաբար, պիտի հանդիսանային անոր զանազան թիւերու առաջնորդող յօդուածները: Շաւարշ Քրիսեանի համար թերթի առաքելութեան զարգացումին գլխաւոր առանցքները կը կազմէին.-

- Հայ անհատին բարոյական, մտային ու մանաւանդ ֆիզիքական զարգացումը, ի սպաս ազգային նպատակներու՝ յատկապէս հայկական վարժարաններու միջոցով:
- Հայ մարզական խումբերու, հայկական ողիմպիական-

ներու եւ հայ մարզական ընդհանուր միութեան մը կազմակերպումը:

- Սկստական շարժումի որդեգրումը եւ անոր պատշաճեցումը հայկական իրավիճակին:

Այս նպատակներու ծառայութեան տեսլականով, «Մարմնամարզ»ի խմբագրականները յաճախ կը շօշափեն վերոյիշեալ նիւթերը, զանազան տեսանկիւններէ դիտուած.-


- «Մարզ»ու կերպաւորում:
- Պարտաճանաչութիւն:
- Հայկական ողիմպիականներու կազմակերպում:
- Հայկական սկումբներու կազմութիւն եւ կազմակերպում:
- Մարզանքի ներմուծում հայ վարժարաններէ ներս եւ պայքար անոր հակառակորդներուն դէմ:
- Հայ մարզիկի ծանօթացում միջազգային բեմերու վրայ:
- Հայ կնոջ նպաստը առողջ սերունդներու կազմութեան:
- Բացօթեայ կեանքի առողջապահական առաւելութիւնները:
- Ազգային վերածնունդ մարզանքի ճամբով:
- Հայ սկստական շարժման քաջալերանք:
- Հայ մարմնամարզական ընդհանուր միութեան կազմութիւն:

Իսկ իւրաքանչիւր տարեկերջին, տարուան իրականացումները թուող եւ թերթին՝ իր նպատակին ծառայած ըլլալու հաստատումը կատարող խմբագրականներ:

«ՄԱՐՄՆԱՄԱՐԶ»Ի ՄԱՆԱԳԻՏԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ, ՄԱՐԶԱ-ԲԺՇԿԱԿԱՆ, ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ՅՕԴՈՒՄԾՆԵՐԸ

Խմբագրականներու կողքին, հայ ազգային եւ ֆիզիքական զարթոնքին ծառայեցին «Մարմնամարզ»ի մասնագիտական յօդուածները՝ իրենց մանրամասնուած բացատրականներով եւ գիտական վերլուծումներով: Այս նպատակին իրականացումը կը յատկանշուի մասնագէտ յօդուածագիրներու աշխատակցութեամբ: Այսպէս՝

- Յովհաննէս Հինդլեան, տնօրէն եւ դաստիարակ, հայ պատանի բարոյական կազմաւորման համար ստորագրած է բազմաթիւ յօդուածաշարքեր՝ հետեւեալ գլխաւոր նիւթերով.- Ֆիզիքական դաստիարակութեան պակասը մեր դպրոցներէն ներս, բնախօսական-հոգեբանական հետազոտութիւններ եւ անոնց կիրառութիւնը մանկավարժութեան մէջ, սեռային դաստիարակութիւն, հայ պոյ սկաւալներ: Ինչպէս նաեւ թարգմանական յօդուածներ՝ Առողջապահական կանոններ դպրոցականներու համար, բժիշկ մօրեղբայրս ինչպէս սորվեցուց ինձի



ՀԱՅ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՄԸ

ՍԲՕՔԶՕԼՄԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՂԻՄԲԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՆ ՄԷՋ

Մարմնամարզի խմբագրության կողմէ եղած երկրորդ հրատարակումը մեր 18 փետրվարի շաբաթ երեկոյ, Պոլսոյ 17 ակումբներէն 11 ակումբ իրենց ներկայացուցիչը ուղարկած էին զրկուելիք անձը որոշելու ու այդ առթիւ կարծիքներու փոխանակութիւն մը կատարելու:

Մէկ կամ երկու ակումբ իրենց համամտութիւնը և համակրանքները յայտնելով մտադրուած գործին, կը դաւէին ներկայ չի կարնալ գտնուելուն համար, որով հետեւեալ ակումբները ներկայ էին.

Անարոնեան (Պէշիկթաշ), Արաբ (Բերա), Արսաւազ (Գուրուչէմէ), Արծիւ (Մարտիրոս), Շարժում (Ենի Գարու), Սահմի (Սկիւտար), Յաւազիմապիւրաց (Սկիւտար), Լոպէր Գոյեթի հայ ուսա-

նողութիւն (Լոպէրի Գոյեթ), Սասուն (Պալաթ), Տիգրան (Մարտիրոս) և Տար (Կ. Պոլիս):

Դեր ու դէմ վիճաբանութիւններէ վերջ ժողովը որոշեց լաւագոյն հայ ամբիթը ուղարկել, ու այս բանին համար նկատի առնուեցաւ գացողին ոչ թէ մասնագիտական ճիշդը, այլ ընդհանուր մրցումներու մէջ գտնել անոր լաւ տեղ մը գրաւելու հաւանականութիւնը:

Այս տեսակէտով բաւական տաք վիճաբանութիւններէ վերջ Պ. Մ. Գուրուչէմեան խօսք անելով երկու հաւանական ընտրելիներուն բաղդատութիւնը ըրաւ, ու եզրակացուց թէ Պ. Մարտիրոս Մկրտչի լաւագոյն ամբիթն է հայոց մէջ, իբր ընդհանուր զարգացում ունեցող:

Օննդական գործարաններու յատուկ բաներ, սկաուտը եւ իր կեանքին նպատակը:

- Լեւոն Յակոբեան, մարզիկ, իր անձնական փորձառութեանէն.- Ի՞նչպէս ուժովցայ, լողալը:

- Տոքթ. Գարանֆիլեան, բժիշկ.- Լոգանքները առողջութեան տեսակէտով, ֆիզիքական դաստիարակութեան հարկը, արհունը եւ իր հիւանդութիւնները:

- Յակոբ Քրիսեան, մարզիչ.- Մարմնամարզը մեր վարժարաններուն մէջ, հայ տիկնանց ակումբ, երեխան ի՞նչպէս մեծցնելու է, դպրոցական խաղեր, մարմնական պատիժը եւ իր հետեւանքները, տղուն աշխատանքը ընտանիքին մէջ:

- Արամ Նիկողոսեան, դաստիարակ.- Մարզանքը ի՞նչպէս ընելու է. թո՞յլ կերպով թէ ծիզով, դնդերներու աշխատութեան ազդեցութիւնը արեան շրջանին վրայ:

- Տոքթ. Ե. Սիրամարզ (Ամերիկայէն).- Ձիւնուոր տղաք, երիտասարդական ընկերակցութեան դերը, ժուժկալութիւն, սակաւակերութիւն:

Իսկ խմբագրապետ Շաւարշ Քրիսեանի գրիչը, իւրաքանչիւր թիւի մէջ, կը մնայ տիրական ներկայութիւն: Անկախ իր խմբագրականներուն ընդհանրական ձեւով շօշափած նիւթերէն, այլազան ու խորապէս մասնագիտական իր յօդուածները կարելի է դասաւորել գլխաւոր հինգ ճիւղերու տակ.-

Ա. Մարզանքի եւ ֆիզիքական դաստիարակութեան օգուտները

- Մարմնամարզը եւ իր անհրաժեշտութիւնը:
- Կիները եւ մարմնամարզը:
- Մարմնամարզը եւ գործի մարզիկ:
- Ֆիզիքական գործունէութիւնը եւ երկարակեցութիւնը:
- Մարմնամարզին մեծ դերը:
- Առօրեայ մարզանքին կարեւորութիւնը:
- Հայ աղջկանց ֆիզիքական կրթութիւնը:
- Առողջ մարդոց մարզանքը:
- Ֆիզիքական դաստիարակութեան ազդեցութիւնը կեանքի գործողութեանց վրայ:

Բ. Մարզանքի եւ մարզախաղերու կարեւորութիւնը հայ վարժարաններէն ներս

- Կրթական ապակեղրոնացում եւ իր վնասները:
- Մարմնամարզը հայ վարժարաններուն մէջ:

Գ. Մարզական եւ սկաուտական շարժումներու կազմաւորում եւ կեղրոնացում մէկ ընդհանուր միութեան հովանին տակ

- Հայ մարմնամարզական միութեան կատարելիք գործը:
- Հայ պոյս կատարողներու կազմութիւնը:
- Հ.Մ.Ը.Միութիւնը եւ իր գործունէութիւնը:

Դ. Ազգային զարթօնը եւ ազգային պաշտպանութիւնը

Մենք ոչինչ կը խնդրենք, բայց իրաւունք ունինք պահանջելու մեր մեծահարուստներէն, որպէսզի հայ երիտասարդութեան ֆիզիքական վերածնութեան մեծ գործին սատար կանգնին: Ուզենք կամ չուզենք, հարուստ թէ աղքատ, նոյն ազգին կը պատկանին: Եթէ ազգ մը մեծ է իր գաւակներուն մէկ մասին դրամով, միւս մասին խելքով, ոչ նուազ մեծ է նաեւ իր երիտասարդութեան ուժովը եւ տոկունութեամբը: Ուրեմն, պարոններ, իսկապէս ազգային գործ մը կատարելու գիտակցութեամբ բարեհաճեցէք մարմնամարզական միութիւններու օժանդակել, ու այս կը խնդրենք ոչ թէ մեզի՝ այլ ազգի՛ն համար:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
«ՄԱՐՄՆԱՄԱՐԶ»Ի
(Շատուած, Բ. տարի թիւ 1)

- Ֆիզիքական կրթութեան բարձր նշանակու-
թիւնը:

- Ազգի մը ֆիզիքական ուժը ազգային պաշտպա-
նութեան տեսակէտով:

**Ե. Մարզանքի բնախօսական մեքանիզմը եւ
թեքնիք ուսուցումը**

- Մարմնամարզական դասընթացք:
- Սեղմիրանը:
- Ֆուլթայլը:
- Մորթիային շնչառութիւնը:
- Մարզանքը եւ բժիշկները:
- Յոգնութեան բնախօսութիւնը:
- Պտուղներու դերը ուժի պահպանման մէջ:
- Առողջութիւնը մարզանքի միջոցաւ:
- Անձնական առողջպահութիւն:
- Գործնական հրահանգներ ֆիզիքական փորձե-
րու ընտրութեան, ուսուցման եւ գործադրութեան
մասին:
- Մարզանքի մասնաւոր բնախօսութիւնը:


**«ՄԱՐՄՆԱՄԱՐԶ»Ի ԳՈՐԾՆԱԿԱՆ
ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄՆԵՐԸ**

«Մարմնամարզ»ի հրատարակութիւնը, որպէս
ամսաթերթ կամ երկշաբաթերթ, մասնագիտական
հրապարակագրութեան իր դերը լիովին արդարա-
ցուց: Սակայն այդքանով չբաւականացաւ: Շաւարշ
Քրիսեանի երազն էր կեդրոնաձիգ գրաւորութեամբ իր
շուրջ բոլորել մարզական շարժումներու պատասխա-

Պէտք է բոլոր հայաբնակ վայրերու մէջ կազմել մարմնամարզա-
կան ակումբներ, որոնց շնորհիւ երիտասարդութիւնը կարենայ մի-
ջոցներ գտնել իր մարմինը խնամելու, առողջութեանը հոգ տանե-
լու, մկանները զօրացնելու եւ անմեղ զբօսանքներ հայթայթելու
համար իրեն: Երիտասարդութիւնը, այդ կերպով, պիտի կարենայ
ինքզինքը գերծ պահել մարմնական մոլութիւններէ, անբարոյացու-
ցիչ ախտերէ, տեսակ-տեսակ հիւանդութիւններէ, պիտի կարենայ հե-
ռու մնալու գինետուներու ախտավարակ մթնոլորտէն, խաղամոլու-
թիւններէ եւ զէսութիւններէ:

Թող կազմուին մարմնամարզիկ խումբեր, գործնական փորձեր
եւ վարժութիւններ սկսին, լուրջ աշխատութիւններ տեղի ունենան,
եւ վստահ եղէք թէ երիտասարդութիւնը պիտի կազմուի ձկուն, զօ-
րաւոր եւ առողջ:

(Շատուած, Ա. տարի թիւ 4)



**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
«ՄԱՐՄՆԱՄԱՐԶ»Ի**

նատուները, միասնաբար իրականացը-
նելու համար գործնական քայլեր:

Նախապէս, ինքնին սկսուած էր ար-
դէն բազմաթիւ ակումբներու խումբե-
րու եւ խմբակցութիւններու կազմու-
թիւնը Պոլսոյ եւ գաւառի գանազան
կեդրոններուն մէջ: «Մարմնամարզ»ի
խմբագրատունը՝ հոն պատահող կամ
կազմակերպուող հանդիպումներով
կը ծառայէր այս ակումբներու եւ
խումբերու թեքնիք զարգացումին: Այս
իմաստով, քաջալերական շատ մը գրու-
թիւններու կը հանդիպինք այս կամ այն
ակումբի գործունէութեանց եւ յաջո-
ղութիւններու մասին: Մինչեւ իսկ ան-
հատական մարզիկներու յառաջդիմու-
թիւնները օրինակելի նմոյշներու կը վե-
րածուին: Այս կարգին յատկանշական
է «Մարմնամարզ»ի քաջալերական
օժանդակութիւնները թատերական
ներկայացման մը յաջողութեան, որ-

պէսզի մարզիկներ Վահրամ Փափագեան եւ Մկրտիչ Մկրեան մասնակցին Մթոքհոլմի միջազգային ողիմպիական խաղերուն:


«Մարմնամարզ»ի խմբագրատան մէջ է որ կը կայանայ նաեւ հայկական առաջին ողիմպիական խաղեր կազմակերպելու նպատակին յատուկ հաւաքոյթը, ու 1911ի Մայիս 1ը կը հանդիսանայ համազգային մարզական ելոյթներու հիմնադրութեան օրը: «Մարմնամարզ» իր 1912 Մարտ 15 թիւով կը հրատարակէ այս ձեռնարկի նիւթական յաջողութեան պատկերը: Իսկ 1911 Մայիսի թիւը, բնականաբար, նուիրուած էր արդէն՝ իր խմբագրականով, պատկերագրող նկարագրականով եւ թեքնիք արդիւնքներով, գրեթէ ամբողջութեամբ, վերոյիշեալ խաղերուն: «Ճամբան սկսուած է, ալ կանգ պէտք չէ՛ առնել», «Ճամբան սկսուած է, ոճիր է կանգ առնել», այս տողերը կը բնորոշէին թերթին տեսլականը հայկական առաջին ողիմպիական խաղերուն կապակցաբար:

Մինչեւ 1914 թուականը, հայկական ողիմպիական խաղերը կը կայանան տարեկան յաջորդականութեամբ, որպէս գործադիր մասնախումբի նստավայր օգտագործելով «Մարմնամարզ»ի խմբագրատունը, եւ թերթի հետեւողական քաջալերական յօդուածներով կը ստանան ժողովրդական լայն տարածում:

Ասոնց կողքին, Գրիսեանի գլխաւոր երազը կը մնար հիմնուած տեսնել եւրոպական առումով մեծ ու կազմակերպուած ակումբ մը՝ «Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութիւն» անունով: Այս նպատակին իրականացման համար ան հայկական առաջին ողիմպիականի յաջողութիւնը նախապայման կը նկատէ: Ձեռնարկը յաջողութեամբ կը պսակուի եւ առիթ կը հանդիսանայ Պոլսոյ եւ շրջակայքի հայկական ակումբները հրաւիրելու ընդհանուր հաւաքոյթի մը «Մարմնամարզ»ի խմբագրատան մէջ: Այս հաւաքոյթին յաջողութեան համար Գրիսեան անդուլ կ'աշխատի եւ յաջորդական հրաւէրներ կ'ուղղէ իր երազը իրականացած տեսնելու հեռանկարով: Հաւաքոյթներ կը նախատեսուին 29 Յուլիս 1912ի եւ 19 Օգոստոս 1912ի թուականներուն, որոնք սակայն չեն կայանար: Պաքսեան պատերազմին ստեղծած անստոյգ վիճակը արգելք կը հանդիսանայ անոնց յաջողութեան: Սակայն, Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութեան պատկերը հետզհետէ կ'ուրուագծուի Գրիսեանի եւ անոր գործակիցներու մտքին մէջ: Գրիսեան իր պատկերացումը յստակօրէն կ'արտայայտէ «Հայ Մարմնամարզական Միութեան կատարելիք գործը» եւ «Մարմնամարզը հայ վարժարաններուն մէջ, անոնց կատարելիք դերը Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութեան մէջ» յօդուածներով: Այս ճիգերը, ի վերջոյ, կը պսակուին ինչպէս «Առաջին հայկական ողիմպիական» խաղերը, որոնք տարակոյս չկայ թէ հայ կեանքի եւ գոյութեան պատմութեան մէջ նշանակելի էջ մը պիտի բանան:

Ընթերցող, մենք վարժարաններ չկարողացանք շինել, եկեղեցիներ եւ հիւանդանոցներ ալ չշինեցինք, բայց մեր բարոյական ուժովը եւ հեղինակութեամբը պատճառեալ, որ թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ գաւառաց մէջ հիմնուին վարժարաններ, որ այսօր հայ երիտասարդութեան հազարաւոր անդամները կը մարզուին եւ որոնք վաղուան հայութեան ամենաընտիր մասը պիտի կազմեն: Մենք հիւանդներու թիւը պակսեցուցինք: Բայց մենք աւելի մեծ գործ մ'ալ տեսանք, հիմնեցինք «Առաջին հայկական ողիմպիական» խաղերը, որոնք տարակոյս չկայ թէ հայ կեանքի եւ գոյութեան պատմութեան մէջ նշանակելի էջ մը պիտի բանան:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ՄԱՐՄՆԱՄԱՐԶ»Ի (Շատուած, Ա. տարի թիւ 10) եւ կը նըլի իր պատկերացումը յստակօրէն կ'արտայայտէ «Հայ Մարմնամարզական Միութեան կատարելիք գործը» եւ «Մարմնամարզը հայ վարժարաններուն մէջ, անոնց կատարելիք դերը Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութեան մէջ» յօդուածներով: Այս ճիգերը, ի վերջոյ, կը պսակուին ինչպէս «Առաջին հայկական ողիմպիական» խաղերը, որոնք տարակոյս չկայ թէ հայ կեանքի եւ գոյութեան պատմութեան մէջ նշանակելի էջ մը պիտի բանան:



սկառուտական շարժումները որպէս «Երկու նոր ուժեր» ներկայացնող խմբագրականի մը լրոյս ընծայու- մով:

«Մարմնամարզ» իր վերոյիշեալ իրականացումնե- ռու սահմանն ալ կը շրջանցէ, երբ թերթը կը գործադ- րէ բոլորովին նոր տեսակի աշխատանք, այս անգամ հրատարակչական ասպարէզէն ներս: Այսպէս է որ Բիւզանդ Կէօզիւպէօյիւքեանի թարգմանական «Սերնդագործում եւ սեռային առողջաբանու- թիւն» (հեղինակ՝ HALL) գիրքը լրոյս կը տեսնէ պրա- կային դրուածքամբ, 1913ի սկիզբէն սկսեալ: Իսկ, պոյ սկառուտներու մասին գրքոյկ մը ձրիօրէն կը տրա- մադրուի «Մարմնամարզ»ի բաժանորդներուն, Յունուար եւ Փետրուար ամիսներու թիւերով ծա- նուցուած:


«ՄԱՐՄՆԱՄԱՐԶ»-Ի ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿԱՌՏԱԿԱՆ ՇԱՐՓՈՒՄԻ ԾԱՆՕԹԱՅՄԱՆ ԵՒ ՏԱՐԱԾՄԱՆ

Ինչպէս մարզականի պարագային, նոյնպէս սկառուտական շարժման քաջալերող կը հանդիսանայ «Մարմնամարզ» ամսաթերթ-երկշաբաթերթը: Սկիզ- քը վերապահ եւ զգոյշ սկառուտական շարժման մա- սին, հետզհետէ աւելի ստոյգ ծանօթացումներ կը հա- ղորդէ Յովհաննէս Հինդլեանի յօդուածաշարքով, իսկ 1912ի կիսուն, Տ. Ե. Սիրամարգի յօդուածով յստակ հրաւէր կ'ընդդէ հայ դաստիարակներուն եւ դեկավարութեան՝ հիմնելու հայ պատանիներուն յա- տուկ սկառուտական շարժում, շեշտը դնելով անոր գինուորական եւ կարգապահական նկարագիրին վրայ: 1913ի սկիզբը, Քրիսեան աւելի շեշտակիօրէն կը գրէ՝ սկառուտական շարժումը վարժարաններու աշակերտու-

Շատ ուսուցիչներ ունինք, լեզուներու մասնագետներ, փիլիսոփայու- թեան տորթորներ, քերականագետներ ու հայագետներ, երաժշտապետ- ներ եւ տիրացուներ, պատուելիներ եւ փորձետօրներ: Սակայն ուսու- ցիչներու այս բանակին մէջ քանի՞ հատ կրնաք ցոյց տալ մարմնա- կրթութեան ուսուցիչներ, որոնք կարենային հայ երիտասարդութեան վատասերումին եւ փձացումին դէմ պատուար կանգնիլ:

Սակայն դժուարին հարցերու առջեւ ձեռնածալ ու երազուն մնալ տկար մարդու գործ է, ու մենք, գոհութիւն մեր կամքին, տկարներ ըլ- լալ չենք ուզեր: Ու հոտ, մեր պարտականութիւնն է որ ծնունդ կ'առ- նէ:

(Շատուած, Ա. տարի թիւ 5)



թեանց ծանօթացնելու նպատակով եւ իր տեսիլքը անմիջակա- նօրէն շօշափելի իրականացում ներկայացնելով: Նոյնպէս,

1913ի փետրուարին, «Մարմնամարզ»ի թիւին հետ որպէս նուէր Քրիսեան կը միացնէ պոյ սկառուտներու մասին գրքոյկ մը, որ իր տեսակին մէջ առա- ջինը ըլլալով, մեծապէս օգտակար կ'ըլ- լայ պատանիներու դաստիարակու- թեան՝ այս նոր մեթոտի կիրարկման զանազան շրջաններէ ներս: «Պոյ սկառուտը եւ իր կեանքին նպատա- կը - Հայ պոյ սկառուտներ» անունով այս գրքոյկը մեծապէս կը ծառայէ սկառուտական շարժումը ժողովրդա- կանացնելու նպատակին:

Այս նպատակով նաեւ Քրիսեանի դասախօսական ելոյթները Սկիւտարի հայ երիտասարդական շրջանակնե- ռուն մէջ, անմիջակայս կ'արդիւնաւոր- ւին: Պոլսոյ մէջ սկառուտական շարժ- ման գործնական առաջին քայլերը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ՄԱՐՄՆԱՄԱՐԶ»-Ի

կ'արձանագրուին նոյն թաղամասի Պէրպէրեան, Մեզպուրեան եւ Տայեան վարժարաններուն, ինչպէս նաեւ՝ Աղջկանց Ամերիկեան Վարժարանի աշակերտութեանց մասնակցութեամբ: «Մարմնամարզ» կը շարունակէ իր առաքելութիւնը, 1913ի յաջորդական թիւերուն մէջ տալով «Յայ պոյ սկաուտին դպրոցը» վերնագրին տակ, 38 յօդուածներէ բաղկացող սկաուտական գործնական կանոնագրութիւն մը՝ կարելի բոլոր մանրամասնութիւններով եւ ներկայացնելով Սկիւտարի Հայ սկաուտներու առաջին խումբին խմբանկարը՝ պաշտօնական տարագով: Թերթը 1913ի Ապրիլի թիւով կ'աւետէ Հայ սկաուտներու առժմեայ տնօրէն ժողովի մը կազմութիւնը, իսկ տարեվերջի թիւով արձագանգ կը հանդիսանայ ներքին գաւառներէն՝ Չմշկածագի մէջ սկսուած սկաուտական «Տերսիմ խումբ»ի կազմութեան:

ՄԱՐՄՆԱԶԻԱՐՅ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ

Մեր նպատակներն մէկն է միջոց մը եւ անկից մը ըլլալ՝ որպէս զի Հայ երիտասարդութիւնը այլեւս թօթախուի իր կենդանի մեակութենէն, եւ միանալով, ունեն թաղերու, գիւղերու, քաղաքներու մէջ մարմնամարզական ակումբներ բանալ, քրջումներ կազմակերպել, մարմնակրթութեան մըլում տալ, նախ պատրաստուելու նամար խտամբեր կեանքի մը՝ դիմուորսութեան, որ անխուսափելիութն իր կեանքին լաւագոյն տարիներէն մէկ քանին պիտի գրաւէ, ու յետոյ, սոյն տալու նամար թէ Հայ ծնած դեղերն ու տղիւնք սովուն եւ ազնիւ սեռակէ են, իսկ իր վնէն հիմա միջաշղթայն ու սեղական քրջումներու շմանակցելուն պատճառն այ

ԱԿՈՒՄԲՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Խմբագրութիւնն՝ մշտ թեկադարձ Հայ երիտասարդութեան պատմութեան գաղտնիքն՝ ա՛նա կոչ կ'ընէ Հայ երիտասարդութեան, որպէս զի իր երկ պատմութեան նամար կազմակերպել մարմնամարզական ակումբներ: Ա՛նա թէ ինչպէս -

Ա. Որքէ անցի երիտասարդութեան մտ մը կամ նոյն իսկ անձնա մը ուր ևս ստացած է մարմնակրթման քրջումներն եւ անձրածկաութեան՝ պարտաւոր է սրբէ ձեւով մը հրուէր կարգով իր սեղի երիտասարդութեան եւ նոյն իսկ տարեշնորհութեան նամակները ղտմանք, պարզել հոս քոյիին նպատակը, ու գաղտնիքներու փոխանակութենէ մը ետք անգամ գրուողները սրասել, ինչնա կարտաւեան ըստ

ՄՏԱՅԱՆՔ

ԲԺԻՇԿԻՆ Բ. ԽՕՍԲԸ

ԲԺԻՇԿ Կարպիս Հարպոյեան

Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 2011:

with the complements of

Restaurant Al-Mayass

§ Ø² ð Ø Û² Ø² ð ¼! Æ Ì Û à ô Û , À


Օ սմանեան կայսրութեան հայ բնակչութեան շրջանում մարմնամարզութեան ու սպորտի հանդէպ հետաքրքրութեան ծաւալման եւ պրոֆեսիոնալ մարմնամարզիկների ասպարէզ գալուն զուգընթաց սպորտն աւելի տարածելու, այս շարժմանն աւելի լայն շրջանակներ ընդգրկելու համար նոր պահանջներ յառաջացան: Ահա այդ հրամայականով ծնուեց հայկական «Մարմնամարզ» հանդէսը, եւ կարելի է ամենայն որոշակիութեամբ փաստել, որ եթէ մարմնամարզական շարժումն արեւմտահայ իրականութեան մէջ մտաւ Օսմանեան կայսրութեան տարածքում գործող օտարերկրեայ, եւ յատկապէս ամերիկեան քոլէճների միջոցով, ապա դրա «հայկականացումը» տեղի ունեցաւ Շաւարշ Բրիտեանի

կողմից Պոլսում լոյս տեսնող «Մարմնամարզ» հանդէսի (1911-1914 թուականների) շնորհիւ:

Այս նախաձեռնութեանը մեծ աջակցութիւն ցուցաբերեցին Յովհաննէս Հինդլեանը, տաթթոր Գարանֆիլեանը, Արամ Նիկողոսեանը եւ Լեւոն Յակոբեանը: Հանդէսի վարչական տնօրէն-պատասխանատու նշանակուեցաւ Կարօ Ունճեանը: Սկզբնական շրջանում պարբերականը լոյս էր տեսնում Յակոբ Սիրունու անմիջական մասնակցութեամբ ու աջակցութեամբ:

«Մարմնամարզ»ը, ինչպէս իրաւացիօրէն նշում է պոլսահայ յայտնի մարզիկ եւ հայկական սպորտի պատմութեան տարեգիր Գրիգոր Ճոլոլեանը, «անհատական նախաձեռնութեան ու անձնական ծիզերու ու զոհողութիւններու վրայ հիմնուած հրատարակութիւն էր...» («Ազդակ», Պէյրուս, 17.12.1938): Իրաւամբ «Մարմնամարզ»ը դարձաւ կայսրութեան մարզական առաջին պարբերականը՝ իւրօրինակ երեւոյթ հանդիսանալով արեւմտահայ պարբերական մամուլի պատմութեան մէջ: Այն ժամանակի բարձր եւ տրամադրութիւնների իւրօրինակ արտայայտիչը դարձաւ՝ միաժամանակ որոշակիօրէն ստանձնելով սերունդների ազգային դաստիարակութեան, դրա գաղափարախօսական հայեցակարգի ձեւաւորման ու տարածման կարեւոր առաքելութիւնը: «Մարմնամարզ»ի առաջին համարում գետեղուած էր հայ երիտասարդութեանն ուղղւած կոչ, որում ասուում էր. «Մեր նպատակներէն մէկն է միջոց մը եւ աջակից մը ըլլալ՝ որպէսզի հայ երիտասարդութիւնը այլեւս թօթափուի իր կենդանի մեռելութենէն, եւ միանալով, ամեն թաղերու, գիւղերու, քաղաքներու մէջ մարմնամարզական ակումբներ բանայ, մրցումներ կազմակերպէ, մարմնակրթութեան մղում տայ, նախ պատրաստուելու համար խստամբեր կեանքի մը՝ զինուորագրութեան, որ անխուսափելիօրէն իր կեանքին լաւագոյն տարիներէն մէկ քանին պիտի գրաւէ, ու յետոյ, ցոյց տալու համար թէ հայ ծնած դնդերն ու արիւնը տոկուն եւ ազնիւ տեսակէ են, իսկ իր մինչեւ հիմա միջազգային ու տեղական մրցումներու չմասնակցելուն պատճառն ալ՝ ոչ թէ իր մկաններուն ու իր արիւնին այլատերած ըլլալն էր, այլ այդ տեսակ մրցումներու գոյութեան անգիտանալ ու անոնց պատրաստուած չըլլալը» («Մարմնամարզ», Ա. տարի, թիւ 1, 1911 Փետրուար):

Ի սկզբանէ «Մարմնամարզ»ի առջեւ ծառայել էին մի քանի կարեւորագոյն խնդիրներ, նախ՝ մասսայականացնել սպորտային կեանքը, նպաստել մարմնակրթութեան ու սպորտի նկատմամբ հետաքրք-



րութեան արթնացմանը յատկապէս գաւառի հայաբընակ քաղաքներում ու գիւղերում, տեղեկութիւններ հաղորդել կայսրութեան տարածքում եւ աշխարհում տեղի ունեցող մարզական իրադարձութիւնները մասին եւ կատարել հայկական մարզական ակումբների գործունէութեան ու առաջնութիւնների կազմակերպման համակարգողի դեր:

Բնականաբար, «Մարմնամարզ»ի էջերում մեծ տեղ էր յատկացւում հայ եւ օտար հեղինակների՝ մարմնակրթութեան, առողջապահութեան, մանկավարժութեան, սպորտի զարգացման թեմաներով հրապարակումներին: Եւ յատկանշական է, որ հայկական զրականութեան մէջ մարմնամարզութեամբ եւ սպորտով զբաղուելը չէր դիտւում լոկ ինքնանպատակ գործունէութիւն, այլ պայմանաւորւում էր նաեւ առողջ սերունդ դաստիարակելու մտահոգութեամբ, յատկապէս՝ հայկական վարժարաններում:

Հէնց միայն այն փաստը, որ «Մարմնամարզ»ի միջոցով յաջողուեց նախաձեռնել ու կազմակերպել հայկական ողիմպիական խաղերի անցկացումը, վկայում է այդ ոլորտում պարբերականի մեծ ու շնորհակալ դերի մասին:

Յայտնի հայ մարմնամարզիկ Սթոքհոլմի միջազգային ողիմպիական խաղերում Օսմանեան կայսրութիւնը ներկայացրած վահրամ ֆափազեանն իր «Երիտասարդութեան ձայնը» յօդուածում, դրուատելով յունական մարզական կազմակերպութիւնների գործելակերպն ու մարմնամարզութեան հանդէպ եղած ուշադրութիւնը, քննադատելով հայ երիտասարդների պարապութիւնը, ծուլութիւնը եւ միւս յոռի բարքերը, գրում է. «... Վստահ եղէք որ, եթէ Պոլսոյ մէջ մարմնամարզական հայ ակումբ մը կազմուի, քիչ ատենէն թուրքոյ բոլոր նոյն տեսակ ակումբներուն մէջ առաջինը կը հանդիսանանք:


Տղայոց դաստիարակութեան ամենէն դժուար խնդիրն է կամքի դաստիարակութիւնը, տղան կամք ընելով կրնայ իր շատ մը մտաւորական եւ հոգեկան թերութիւններուն գոնէ մեծագոյն մասին դարման տանիլ:

Անշուշտ չենք յաւակնիր պնդելու թէ ամէն բարոյական եւ մտաւորական թերութիւն կարելի է լոկ ֆիզիքական կրթութեամբ դարմանել, բայց մանաւանդ դպրոցական տղայոց յատուկ եղող կարգ մը պակասութիւններ կը վերնան պարզապէս մաքուր օդի, բացօդայ կեանքի եւ մարզանքի միջոցաւ:

Կ'արժէ որ հայ ուսուցիչները ուշադրութիւն դարձնեն այս կետին ու ըստ այնմ ուղղեն իրենց ջանքերը եւ իրապէս կ'ուզեն իրենց յոգնութիւնները առաւելագոյն չափով օգտակար եղած տեսնել:

**ԽՍԲԱԳՐԱԿԱՆ
«ՄԱՐՄՆԱՄԱՐԶ»Ի**

(Շատուած, Բ. տարի թիւ 5)




ակումբներուն մէջ առաջինը կը հանդիսանանք:

«Այսօր մեր մէջ արդէն կան յոյներուն փառքը կազմող Տորիզասի մը հետ մրցելու կարող ու անոր դափնիները խլելու կարող մարմնամարզիկներ: Ու եթէ Եւրոպան հայուն արիւնովը մեզի չձանչցաւ, թող զմեզ մեր ուժովը ձանչնայ» («Մարմնամարզ», Ա. տարի, թիւ 2, 1911 Մարտ):

«Մարմնամարզ»ը քարոզչական գործունէութիւն էր ծաւալում նաեւ մարմնակրթական եւ սպորտային ակումբներ ստեղծելու ուղղութեամբ ուղեցրցի ու խորհրդատուի դեր ստանձնելով նման ակումբների կազմակերպման համար: Ընդ որում, սպորտը դիտելով որպէս քաղաքացիական գիտակցութեան ցուցիչ՝ մարզական ակումբների ստեղծումը եւ յատկապէս թիմային մարզաձեւերի զարգացումը դիտւում էին ազգային պա-

ուակառուածութեան երեւոյթները յաղթահարելու եւ նոր որակի ազգային գծեր ու կենսագործունէութեան նոր փիլիսոփայութիւն ձեւաւորելու կարելորդ գրաւական: Դրա վառ վկայութիւնն են Շ. Քրիսեանի հետեւեալ տողերը: «Առաւելապէս մեզ, հայերուս համար ակումբներու զոյուքիւնն ու զարգացումը ահագին կարելորութիւն ունի այն տեսակետով որ, այդ միջոցով կը վարժուինք հաւաքական կեանքի. իրաւամբ հայոց ամէնէն քննադատելի կողմերէն մէկն ալ նկատուած է անոնց դէպի անհատապաշտութիւն ունեցած բնագոյր: Հաւաքական կեանքի պայմաններու ենթարկուիլ հայու մը համար միշտ ծանր ու դժուարին կու գայ: Ակումբներու միջոցաւ է որ այդ ոգին պիտի մեղմացուի, եւ պիտի տրուի հայ պատանիներուն սէր դէպի հաւաքական կեանքը...»

«Սէկ խօսքով մարմնամարզական ակումբները հինգ մըն են ոչ միայն ֆիզիքական ուժի, այլեւ կազմակերպւած ու կարգապահ հաւաքականութեան եւ քաղաքացիական դաստիարակութեան» («Մարմնամարզ», Բ. տարի, թիւ 18, 1912 թ. Սեպտեմբեր 15):



«Մարմնամարզ»ին ակտիւորէն թղթակցում էին Զմիւռնիայից, Քէօթահայից, Արաբկիր, Պարտիզակ, Կեսարիա քաղաքներից եւ այլ վայրերից: Անմասն չէին մնում նաեւ Եգիպտոսի, Պուլկարիայի, Ա.Մ.Ն. հայկական գաղութների մարզասէրներն ու մարզիկները: Կարելորդում էր նաեւ հանդէսի համարները գաւառների դպրոցներ ու վարժարաններ հասցնելու հանգամանքը՝ գաւառահայութեան շրջանում պարբերականի տարածումն իրականացնելու համար: Սիւրբաբաբայից զատ հանդիսանում էր նաեւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան պաշտօնաթերթը:

Լայն թափ ստացած մարմնակրթական եւ սպորտային շարժումն առաջ բերեց նաեւ հայկական մարզական կառույցների համախմբման գաղափարաբար, որի առաջամարտիկն ու աջակիցը կրկին Շ. Քրիսեանն էր: Մասնաւորապէս Ստամպուլի եւ Զմիւռնիայի հայկական բազմաթիւ ֆուլթպուլային թիմերի գոյութիւնն անհրաժեշտութիւն դարձրեց ստեղծել առանձին, զուտ հայկական ֆուլթպուլային լիկա:

«Մարմնամարզ»ի առանձին հայկական ֆուլթպուլային լիկա ստեղծելու նախաձեռնութիւնը միանշանակ չընդունուեց հայկական ակումբների կողմից: Այս նպատակով հրաւէրներ ուղարկուեցին Պոլսի հայկական ֆուլթպուլային ակումբներին, սակայն արձագանքը սպասուող արդիւնքը չտուեց: Չնայած հանդէսի խմբագիրը դժգոհում է հայ մարզիկների կողմից մարմնի կազմուածքի պատկերով լուսանկարներ տրամադրելու դժկամութիւնից, այդուհանդերձ «Մարմնամարզ»ի էջերում գետեղուեցին շուրջ երկու տասնեակ հայ մարզիկների լուսանկարներ՝ մարմնի կազմուածքի պատկերով:

Ուշագրաւ է նաեւ այն փաստը, որ եթէ առաջին համարներում «Մարմնամարզ»ը լոյս էր ընծայուում որպէս պատկերագրող ամսաթերթ, ապա յաջորդող համարներում այն արդէն հանդէս էր գալիս որպէս «Օրկան ազգային ֆիզիքական վերածնութեան», իսկ այնուհետեւ՝ «Օրկան ազգային ֆիզիքական կրթութեան»՝ դրանով իսկ շեշտադրելով իր իրական կոչումը եւ վերածուելով Օսմանեան կայսրութեան հայ բնակչութեան շրջանում մարզական կեանքը խթանող կարեւորագոյն գործիքի ու միջոցի:

«Մարմնամարզ»ի առաջին համարի լոյս ընծայման առաջին տարում՝ 1911 թ. հրատարակուում էր որպէս ամսաթերթ՝ լոյս տեսնելով 10 համարներով: Երկրորդ տարում, ընդառաջելով ընթերցողների խնդրանքին, այն վերածուեց կիսամսեայ հանդէսի, եւ 1912 թ. լոյս տեսաւ 24 համար: Տպարանների ու խմբագրատների հասցէների պարբերաբար փոփոխութիւնները յուշում են, որ թերթը նիւթական դժուարութիւններ է կրել:

«Մարմնամարզ»ի հրատարակութիւնը բացառիկ երեւոյթ էր հայ իրականութեան մէջ: Նշանաւոր հայ մարմնամարզիկ Տիգրան Խոյեանն այս առիթով իր յուշերում գրում է. «Մարմնամարզ»ը մեծ բաց մը գոցեց, եւ ճիշդ ատենին հասաւ օգնութեան՝ ֆիզիքական դաստիարակութեան կարելորութիւնը ծանօթացնելու համար, մինչ այդ եւ այդ ուղղութեան թափուած ջանքերուն այնքան յամառօրէն ընդդիմութիւն ցոյց տուողներուն: Եղաւ խորհրդրդատուն եւ առաջնորդը պատանի եւ երիտասարդ մեր սողոցը...»:

«Մարմնամարզ»ը լոյս տեսաւ մինչեւ 1914 թ.: Պարբերականի հիմադիր Շաւարշ Քրիսեանը դարձաւ Մեծ Եղեռնի զոհ եւ թերթը դադարեց լոյս տեսնելուց: Առաջին համաշխարհային պատերազմից յետոյ «Մարմնամարզ»ին փոխարինելու եկաւ «Հայ սկսուած»ը, որը մարմնակրթական ու մարզական թեմաներին անդրադառնալուց զատ հանդիսանում էր նաեւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան պաշտօնաթերթը:

ԱՌԱՋԻՆ ԽՕՍՔ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ՄԱՐՄՆԱՄԱՐԶ»Ի

Ա. տարի, թիւ 1, Փետրուար 1911

Այնպէս համոզուած ենք ու պատմական փաստեր ունինք ուրիշներն ալ համոզելու, թէ այն ազգերը որոնք կ'ուզեն իրենց գոյութիւնը ապահովել, բարգաւաճիլ ու զարգանալ, ըլլայ վաճառականութեան, ըլլայ գիտութեանց եւ ուսմանց մէջ, պարտաւոր են միտքն ու մարմինը իբր ամբողջ մը նկատել ու ըստ այնմ երկուքն ալ հաւասարապէս զարգացնել:

Սահմանադրութենէն ասդին զանազան թերթեր, մանաւանդ պարբերականներ հրատարակուեցան. ատոնցմէ շատերուն անունն անգամ մոռցած ենք. ու իրենց չկարենալ շարունակելը շատ բնական էր, որովհետեւ տարբեր անուններու տակ գրեթէ նոյն նիւթի մը կրկնութիւնն էին եւ ուրիշ ոչինչ:

Մենք տակաւին ոչ մէկ թերթ տեսանք, որ մեր նորմալ կեանքին մէջ կրթիչ նորութիւն մը մտցնելու նկրտեր: Յաւով կ'ըսենք թէ տակաւին դաստիարակութեան համար այնքան կարեւոր ու ազգի մը ապագային մասին այնքան անհրաժեշտ մանկավարժական թերթի մը հրատարակութիւնը չտեսանք:

Բայց ցաւիլն ու լալը չեն բաւեր: Ու այսօր, թրքահայ գրականութեան մէջ մեծ պակաս մը գոցելու համար, ձեռնարկած ենք հրատարակել ներկայ ամսաթերթը, որուն գլխաւոր ու գրեթէ միակ նպատակը պիտի ըլլայ հայերէն գիտցողներուն հասկցնել թէ ամէն բանէ առաջ մարդ *կենդանի* մըն է, ու պարտաւոր է իբր *բանաւոր* էակ, իր ունեցածը, այսինքն մարմինը խնամել եւ բարելաւել:

Մարմնամարզը ինքնավստահութիւն կու տայ եւ նկարագիր կը շինէ, ու էթ 50 տարի առաջ մեր մէջ ալ մուտ գտած ըլլար կանոնաւոր ֆիզիքական կրթութիւն մը, վստահօրէն այսօր չէինք իբր հայ բնորոշուեր այն յատկութիւններով, որոնք մեր առաւելութիւնները նսեմացնելու միայն կը ծառայեն:

Թերթիս ուղղութիւնը պիտի ըլլայ ամսէ ամիս, իսկ պահանջքներու զարգանալու պարագային ամիսը երկու անգամ հրատարակուելով տալ այն բոլոր ծանօթութիւններն ու տեղեկութիւնները, որոնց գիտակցութեամբ եւ գործադրութեամբ միայն կարելի է առողջ ու երջանիկ ապրիլ:



Շատ լաւ համոզուած ըլլալով որ մարդ այնքան կ'արժէ մտաւորապէս՝ որքան ֆիզիքապէս ու փոխադարձաբար, մեր այս ձեռնարկը յաջողելու համար ապահոված ենք մեր մէջ դժբախտաբար շատ ցանցառ թիւով գոյութիւն ունեցող մանկավարժներուն մասնակցութիւնը. ու միեւնոյն ատեն շատ լաւ ալ գիտնալով որ մանկավարժ մը առանց բժիշկի եւ բնախօսի օգնութեան կարող չէ մանուկը կրթել եւ *մարդ* ընել, ապահոված ենք ծանօթ բժիշկներու եւ բնախօսներու օժանդակութիւնը: Մէկ խօսքով՝ մեր նպատակը պիտի ըլլայ *մարդ* պատրաստել եւ *մարդեր* են որ մեզի կը պակսին:

Աւելորդ կը համարինք մանրամասնութեանց մէջ մտնել, թերթի մը պարունակութիւնը կը ցուցնէ իր ուղղութիւնը եւ նպատակը. միայն կ'ուզենք աւելցնել թէ հետզհետէ նախաձեռնարկ պիտի ըլլանք կամ մղում պիտի տանք ամէն թաղի ու գաւառի մէջ, մեր կարողութեան չափով, մարմնակրթանքի միութիւններ հաստատելու ու այսպէսով երիտասարդութիւնը բարոյական անկումներէ հեռացնելով, յունական եւ ողիմպիական խաղերու վերածնութեան պէս հայկական ֆիզիքական կրթութիւն մը ստեղծել:

Ու ձամբայ կ'ելլենք:





ՊԱՐԶՅԱՌԱԶԻՆԱՂԱՅՔԻ ՄԸ ԱԻԵԼԻՆ

Միհրան Շիմշիրեան ՊԵՅՐՈՒԹ



Հ.Մ.Ը.Մ-ի 10րդ Ընդհանուր Ժողովի պատրաստութիւններու օրերն են: Ամէնուրեք տեղի կ'ունենան ժողովներ, քննարկումներ եւ զրոյցներ՝ միութեան յառաջիկայ չորս տարիներու ապագային շուրջ: Կը տազնապին բոլորը: Կը տեսնենք ու կը լսենք զանոնք եւ բնական հարցադրում մը կը ծնի մեր մէջ, թէ ի՞նչ ընել եւ ի՞նչպէս ընել, որպէսզի 93ամեայ այս միութիւնը գալիք օրերուն ապրի պարզ յառաջ-խաղացքէ մը աւելին: Մեր ակնկալութիւնը ոստում մըն է դէպի նոր օրեր, նոր տասնամեակներ, աւելի հզօր ու արդիական կառոյցով, աշխատանքի ժամանակակից ձեւերով եւ բազմապատկուած արդիւնքով:

Անշուշտ, այս հարցադրումը նոր չէ, սակայն առաջին անգամն է, որ այսքան սուր կերպով կը ներկայանայ մեզի, որովհետեւ մեր կեանքը այլեւս կը զարգանայ շատ արագ, փոփոխութիւնները տեղի կ'ունենան մեծ տարողութեամբ եւ մենք պարտաւոր ենք պատասխան գտնել այս հարցադրումին, այսօր, նախքան վաղը:

Մտահոգ ենք բոլորս ալ: Մտահոգ մանաւանդ սկաուտական մեր շարժումին ապագայով, որովհետեւ մարզական ճարտարարուեստի եւ արբանեակային կայաններու լայն քարոզչութեան շնորհիւ, եթէ մարզական կեանքը կը շարունակէ մեծապէս հետաքրքրել մեր երիտասարդութիւնը, սկաուտութեան պարագային հարցը տարբեր է: Սկաուտութիւնը ճարտարարուեստ ու «պիզնա» չունի: Ո՛չ ալ քարոզչական լայն միջոցներ ունի: Այսօր ան զգալի նահանջ մը կ'ապրի քիչ մը ամէն տեղ, որովհետեւ կարգապահութեան՝ տիսիփլինի հասկացողութիւնը փոխուած է այլեւս: Սերունդը սկսած է աւելի անձնակեդրոն ու նստակեաց դառնալ, գերին դառնալով համացանցի ընկերային հաղորդակցութեան ցանցերու («Ֆէյսպուք», «Թուիթըր», «Լինք ին»), տեսակաւոր խաղերու («Փլէյ Սթէյշըն 2, 3», «Էքսպոքս», «Նինթենտօ», «Ուլի»...),

բլիթային հեռաձայնի, Այ-Փոտի եւ Այ-Փէտի կապուած այլազան հրապոյրներուն: Բնութիւնը, չարքաչ կեանքը եւ բացօդեայ խաղերը շատերուն համար կորսնցուցած են իրենց քաշողականութիւնը: Կամաւոր աշխատանքի ըմբռնումը եւս փոխուած է մեծապէս: Մարգարաղերու պարագային, մարզիչները յաճախ վճարովի են, իսկ սկաուտութեան պարագային, կարելի՞ է օրին մէկը նման բան պատկերացնել խմբապետներու համար...

Ի՞նչ ընել ուրեմն եւ ի՞նչպէս ընել:
64 տարիներու միութեանական մեր փորձառութիւնը կը թելադրէ եօթը հանգրուաններէ բաղկացած աշխատանքի ուղեգիծ մը, շատերուն ծանօթ՝ «ճամբու քարտէս» մը:

1. ՆԵՐԿԱՅ ԿԱՅՈՒԹԵԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Անհրաժեշտ է նախ առարկայական գնահատում մը կատարել, թէ Հ.Մ.Ը.Մ-ի շարքերը, այսօր, իրենց հիմնադրութենէն 93 տարի ետք, ո՞ր կը գտնուին գիրքեք ծնունդ տուած պայմաններէն: Խօսքը անպայման անդամական թիւերու եւ մասնաճիւղերու մասին չէ, այլ՝ թիւերէն անդին, գործունէութեան ընդհանուր եղանակին եւ անկէ ստացուած արդիւնքին մասին: Քննարկելի բաւական հարցեր կան այստեղ, սկսեալ դաստիարակչական նիւթերու բովանդակութենէն՝ հասնելու համար մեր աշխատանքներու ապագայի հեռանդկարները ճշդելու անհրաժեշտութեան:

Հ.Մ.Ը.Մ. կը գործէ հայրենիքի եւ այնպիսի շրջաններու մէջ (Միջին Արեւելք, Արեւմտեան Եւրոպա, Ամերիկաներ եւ Գանատա, Հարաւային Ամերիկա, Արեւելեան Եւրոպա...), որոնցմէ իւրաքանչիւրը ունի իր տեղական իւրայատկութիւնը: Որո՞նք են այդ իւրայատկութիւնները, տարբերութիւններն ու նմանութիւնները: Հարկ է յստակացնել այդ բոլորը, ճշդել նաեւ այսօրուան մեր կարիքները եւ ըստ այնմ քննել մեր կարողութիւններն ու կարելիութիւնները:

2. ԱՊԱԳԱՅԻ ՀԵՌԱՆԿԱՐ

Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութիւնը կ'ընթանայ չորս տարին անգամ մը գումարուող Ընդհանուր Ժողովներով, որոնք

անցնող չորս տարիներու գործունէութիւնը նժարի դնելէ ետք, ուղի կը ճշդեն յաջորդ չորս տարիներու աշխատանքներու՝ առաւելաբար կեդրոնանալով համա-Հ.Մ.Ը.Մ.ական ընթացիկ ձեռնարկներու (բանակումներ, մարզախաղեր, դիւաններու ժողովներ...) զարգացման վրայ: Առօրեայ հարցերը այնքան մը կը կլանեն ժողովն ու ժողովականները, որ յաճախ անոնք առիթը չեն ունենար միութեան գալիք 5-10 տարիներու ապագային մասին խորհրդածելու, զարգացման նոր ու ընդարձակ հեռանկարներ բանալու միութեան մը առջեւ, որ Միջին Արեւելքէն, Ամերիկաներէն եւ Արեւմտեան Եւրոպայէն դուրս՝ ահագին ընելիք ունի Արեւելեան Եւրոպայի, Ռուսիոյ եւ նախկին Խ. Միութեան երկիրներու նորաստեղծ հայ գաղութներուն մօտ: Տակաւին, առանց անդրադառնալու նոյնինքն Արեւմտեան Եւրոպայի մէջ (Սպանիա, Պելճիքա, Յունաստան...) արտագաղթած հայաստանցիներով կազմաւորուող նոր գաղութներուն:

Հայապահպանումը կարեւոր աշխատանք է, սակայն չի կրնար Հ.Մ.Ը.Մ.ի նման միութեան մը միակ հեռանկարը ըլլալ 21րդ դարու այս օրերուն:

3. ՆԱԽԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Կարելի չէ ամէն գործ, ամէն տեղ, նոյն ժամանակ կատարել: Հարկ է ունենալ նախապատուութիւններ եւ ըստ այնմ որոշել, թէ մեր աշխատանքները ուրի՞նչ պիտի սկսին: Առաջնահերթաբար ո՞ր ծրագիրը, ո՞ւր եւ ի՞նչպէս պիտի իրականացուի: Առաջնահերթութիւնները տեղէ տեղ կը տարբերին:

Օրինակի համար, սկառուտական մարզի պարագային, ո՞րն է օրուան առաջնահերթութիւնը՝ սկառուտական նոր գիրքերու պատրաստութիւնը, Հայաստան-Սփիւռք քոյր մասնաձեւերով բանակումներու իրականացումը թէ՛ միջազգային ճամպորիներուն մեծաթիւ մասնակցութեան ապահովումը:

Մարզականի պարագային, կ'արժէ հարց տալ, թէ առաջնահերթութիւնը տարբեր երկիրներու ախոյեանութիւններուն մասնակցի՞լն է, երկրորդական խումբերու ներքին մրցաշարքի՞ն են, թէ մարզիչներու պատրաստութեան դասընթացքները:

4. ՄԵԿՆԱԿԷՏԵՐ

Առաջնահերթութիւններ ճշդելէ ետք, պէտք է որոշել, թէ ուրի՞նչ սկսիլ գործի: Նորը շինելու համար անպայման հինը քանդելու կարիքը չկայ, որովհետեւ ամէն ինչ որ հին է, հինցած չէ, իսկ ինչ որ նոր կը թուի՝ նորութիւն չէ: Հետեւաբար, պէտք է ճշդել մեր ամուր յենակէտերը՝ ուժի աղբիւրները, կարելիութիւններն ու յաջողութիւնները եւ այդ ձեւով ճամբայ ելլել, կարենալ հասնելու համար որոշուած թիրախին:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ

Նախապատուութիւններու եւ մեկնակէտերու յստակացումէն ետք, կարգը կու գայ աշխատանքի ծրագրի մշակման: Խօսքը միջոցներու եւ ձեւի մասին է, ոչ՝ բովանդակութեան: Ծրագիրը կը ներառնէ աշխատանքի լծուած տղոց ու աղջիկներու պատրաստութիւնը, անոնց ղեկավարներուն մնայուն

որակաւորումը եւ, ամէնէն կարեւորը, նիւթական անհրաժեշտ միջոցներու ապահովումը, որպէսզի ծրագիրները չմնան լոկ ցանկութիւններ:

Այս հանգրուանին շատ հիմնական է մարդուժի պատրաստութեան հարցը: Մարդուժ, որ պիտի հաւատայ ծրագրի կարեւորութեան եւ ի վիճակի ըլլայ հոգեպէս եւ գործնապէս նպաստելու անոր յաջողութեան: Պատրաստութիւնը տեւական ընթացք է: Սեմինարով կամ բանակումով չի սահմանափակուիր: Պէտք է քայլ պահել վարչագիտական, արհեստագիտական բոլոր ձեւի նորութիւններու հետ, որպէսզի կարելի ըլլայ տիրապետել լաւ ծրագրի մը արագ ու անսխալ իրագործման բոլոր «գաղտնիք»ներուն:

6. ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Թուղթի վրայ գրուած որեւէ ծրագիր մեռեալ տարր կը մնայ, եթէ կեանք ու շունչ չստանայ: Ծրագիրները կը մշակուին իրականացուելու եւ ոչ թէ թղթածրարներու մէջ պահուելու կամ ձգձգուելու համար: Սակայն, ծրագիրը մը իրականացնելու համար պէտք է ունենալ անհրաժեշտ տեսիլքը եւ քաջութիւնը: Հսկել, որ ծրագիրը ամենայն մանրամասնութեամբ իրականացուի նախատեսուածին համաձայն, իսկ եթէ յանկարծ խոչընչոտներու հանդիպի, պէտք է պատրաստ ունենալ ծրագրի երկրորդ կարելիութիւն մը (Բ. ծրագիր), որպէսզի ի հարկին դիմուի այդ տարբերակին:

7. ԱՐԺԵՒՈՐՈՒՄ

Մեր ուղեցոյցին վերջին հանգրուանը արժեւորումն է, կատարուած աշխատանքին առարկայական գնահատումը, իր դրական եւ բացասական կողմերով: Կը շեշտենք առարկայականը, որովհետեւ ընկալեալ մօտեցում է ամէն ձեռնարկ կամ ծրագիր ներկայացնել իբրեւ իրագործում, նուաճում: Զեռնարկ ընելը անձական գոհունակութեան համար չէ, ոչ ալ՝ տեղեկագիր լեցնելու պահանջ է: Պէտք է հարց տալ, թէ տուեալ ձեռնարկ մը ի՞նչ կ'աւելցնէ միութեանական մեր կեանքին: Կամ՝ ի՞նչ նորութիւն կը բերէ անոր: Յաջողութիւնը, նորութիւնը համեմատական հարց է: Պէտք է մենք մեզ բաղդատել մեզմէ հզօրներուն հետ եւ ըստ այնմ յանգիլ եզրակացութիւններու: Կայ նաեւ յաջողութեան մը ակնկալութիւններու չափ ու սահմանի հարց: Օրինակի համար, յաջողութիւն է միութեանական ձեռնարկի մը հաւաքել 500 հոգի: 5000 հոգինոց գաղութի մը համար այդ թիւը կրնայ մեծ թուիլ, սակայն 200 հազարնոց գաղութի մը համար՝ ոչ:

Արժեւորման պիտի յաջորդէ կացութեան գնահատումը եւ այդ ձեւով վերադարձ մը պիտի կատարուի առաջին կէտին, կազմելով փակ օղակ մը՝ եօթը շղթաներով:

Հ.Մ.Ը.Մ.ի 10րդ Ընդհանուր ժողովի նախօրեակին, միութեանական շարքերու աշխուժացման եւ հզօրացման համար, իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ական հարկ է ա՛յս դիտանկիւնէն մօտենայ հարցերուն եւ անհրաժեշտ խստապահանջութեամբ պատրաստուի յառաջիկայ օրերուն, հայութեան «կամաւոր բանակ»ը պարզ յառաջխաղացքէ մը աւելիին առաջնորդելու նախանձախնդրութեամբ:

ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԴԷՄ ՅԱՆԴԻՄԱՆ



Հ.Մ.Ը.Մ.ականությունը ապրում է, ոգի է, հաւաքական յիշատակներու աղբիւր եւ պաշար է, հոգեկան կապ է նախորդ սերունդէն նոր սերունդին եւ մանաւանդ՝ միութենական պատկանելութեան ճամբով ազգային պատկանելութիւն է: Հ.Մ.Ը.Մ.ի այս իւրայատուկ իրականութիւնը պարտինք առաւել զարգացնել: Յատուկ ջանքերով մօտեցնենք երէց ու երիտասարդ սերունդները: Հ.Մ.Ը.Մ.ը ո՛չ միայն հոգեկան կապ է շրջանի մը մէջ, այլ՝ համագաղութային հաւաքներով կը մնայ գործնական միջոց Սփիւռքի հայ իրականութեան երիտասարդութիւնը կամըջելու:

Այս իմաստով, հարկ է վերաբեւոբել համա-Հ.Մ.Ը.Մ.ական մեր համախմբումները: Օրինակ, մեր սկսու-

Վարուժան Սերոբեան ՄՈՆԹՐԵԱԼ



Հ.Մ.Ը.Մ.ը այսօր, աւելի քան երբեք, կը մնայ Սփիւռքի կազմակերպութիւն, առաւելաբար ծառայելու գաղթաշխարհի նորահաս սերունդներուն, պաշտածելով նորաստեղծ պայմաններու:

Հ.Մ.Ը.Մ.ը մեծապէս օգտակար շարժում մըն է մանաւանդ նորակազմ փոքր գաղութներու երիտասարդութիւնը համախմբելու եւ անոնց հայկական պատկանելիութիւն փոխանցելու իմաստով, յատկապէս երբ չկան այլ կառույցներ:

Այսօր ունինք երիտասարդութիւն մը, որ հայ կը զգայ՝ առանց հայերէն խօսելու: Առաւելաբար արեւմտեան հայ գաղթաշխարհի մէջ չենք կարողացած տեսնել ու հասկնալ երիտասարդութեան դիմագրաւած դժուարութիւնը: Տասնամեակներ շարունակ լեզուն կարծես հայ ըլլալու նախապայման էր: Կ'արժէ տեսնել թէ հրեաները ի՞նչպէս կը մօտենան նոյն դժուարութեան: Անոնք մանկապատանեկան եւ երիտասարդական հարուստ գրականութեամբ մը, անգլերէն լեզուով կը փոխանցեն իրենց ազգային աւանդութիւնները, տօներու բացատրութիւնները...: Հ.Մ.Ը.Մ. իր ճկուն մօտեցումով գործնական միջավայրն է այդ երիտասարդութեան:

տական շարքերու երէցները եւ պարմանուհիները Հայաստանի մէջ կատարած իրենց յատուկ բանակումներով եւ համադրուած աշխատանքներով օգտաշատ ծրագիրներու մասնակցին... իրենց քրտինքով հայրենիքի հողին կապուին...: Այս եւ նման նախաձեռնութիւններ բնական է կ'ենթադրեն Հայաստանի պետական շրջանակներուն գործակցութիւնը եւ ներդրումը: Արդար է որ մենք այլ ունենանք սպասումներ հայրենի պետութենէն:

Նոյնքան կարեւոր է վերանայիլ մարզական մեր հաւաքներուն կազմակերպման ձեւերը, յատկապէս կրկնութիւններէ խոսափելու համար, ինչպէս՝ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական եւ համահայկական խաղերուն մեր շրջաններու մարզիկներու մասնակցութեան պարտաւորութիւնները: Անպայման կարեւոր է տարբերակներ որոնել:

Հ.Մ.Ը.Մ.ի վերջին Պատգամաւորական Ժողովին, երբ կ'արտայայտուէինք Հ.Մ.Ը.Մ.ը վերանորոգելու կարեւորութեան մասին, կը շեշտէինք անհրաժեշտութիւնը վերանայելու մեր վարչական կառույցները եւ մեր ժողովական կեանքի դասաւորումները: Ե՛րբ պիտի ուսումնասիրենք մեր անդամական ժողովներու իրավիճակը: Մեծ ու նոյնիսկ փոքրաթիւ մասնաճիւղեր դժուարութիւն ունին պարզ մեծամասնութեամբ ժողով գումարելու, հետաքրքրութեան պակասի թէ ժամավաճառութեան հետեւանք: Առաջնահերթ կարեւորութեամբ մեր ժամանակներուն պատշաճեցնենք մասնաճիւղերու անդամական ժողովները:

Մտահոգութիւն է մեզի համար, որ օրին մէկը չդառնանք

Ժողովներու միութիւն:

Յատկապէս սկսելով Պատգամաւորական Ժողովներէն, վերամշակենք պատգամաւորներու համեմատական թիւերը, նուազեցնելով կանոնագիրով ճշդուած պատգամաւորներու ընդհանուր թիւը:

Անցնող աւելի քան 90 տարիներուն Հ.Մ.Ը.Մ. ամէնուրեք գործած է առաւելաբար կամաւոր ուժերով: Այս աշխատելաձեւը հարկ է շարունակել եւ յատուկ ուշադրութեամբ աշխատիլ կամաւորներու մակարդակը բարձրացնելու, այդ ըլլայ մարզական, սկաուտական եւ վարչական կազմերու համար, միշտ ալ մասնագէտներու լայն փորձառութեան օգտուելով եւ անհրաժեշտ պիւտճէ տրամադրելով: Նոյնքան կարեւոր է նոր կամաւորներ ապահովելու կամ ներգրաւելու աշխատանքը: Մասնաւոր ճիգ անհրաժեշտ է դրական մթնոլորտ ստեղծելու եւ զոհաբերութեան գիտակցութիւնը զարգացնելու: Մեր գաղութներէն ներս գնահատանքը (appreciation, acknowledgement) ընդհանրապէս կը պակսի: Հաւատաւոր կամաւորներու ո՛չ աշխատանքը, ո՛չ ալ ժամանակը պատշաճ ճանաչում կ'ունենայ: Այսօր կարեւոր ազդակ է արդար գնահատումը եւ



գնահատանքը՝ նորագիր կամաւորներու մասնակցութիւնը ապահովելու կամ անոնց թիւը բազմացնելու համար:

Միւս կողմէ, պէտք չէ անտեսել նաեւ յարաբերական եւ հաղորդակցութեան կապի արդիական միջոցներու ընծայած առաւելութիւնները: Փափաքելի պիտի ըլլար գիտնալ, թէ Միջին Արեւելք, Արեւմուտք կամ Հարաւային Ամերիկա Հ.Մ.Ը.Մ.ական շարքերու ի՞նչ համեմատութիւնը

«Մարզիկ»ը կը տեսնէ կամ քանի՞ տոկոսը կը կարգայ եւ վերջին պարագային՝ ի՞նչ են ընթերցողներու տարիքային խմբաւորումները:

Արդի արհեստագիտութեան ընծայած նորանոր հնարաւորութիւնները այսօր ստեղծած են ժխտական մէկ իրականութիւն: Արդարեւ, պատանիներ ու երիտասարդներ օրէ օր քիչ մը աւելի նստակեաց կը դառնան համակարգիչին կառչած: Հ.Մ.Ը.Մ. պարտականութիւնը ունի այդ պատանի սերունդը դաշտ կամ հաւաքավայր բերելու, առանձնացած ու լճացած վիճակէն ձերբազատելու եւ ֆիզիքականը զօրացնելու համար:



Elegance Plus Shoes, Bags, Fashion Accessories & Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon
Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556
Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812
E-mail: hratch@goldenmountains.com
hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.



Ռուբեն Նալպանտեան Արարատի օգագաթին:

ԱՆԾԱՆՕՌ, ԲԱՅՑ ՀԱՐԱԶԱՏ ԵՂԲԱՅՐԱ՝ ՌՈՒԲԷՆ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

խորհրդանշող Հ.Մ.Ը.Մ.ականի երդումը այնքան խորհրդա-
լոր եւ հրապուրիչ էր թուած որեւէ վայրի մէջ, որքան ամպե-
րէն դուրս ժայթքած Արարատի բարձունքին:

Արտասանած իւրաքանչիւր խօսքը փչող հովերը տարածե-
ցին երկրագունդի չորս ծագերուն, ներշնչումի ապրումներ
բորբոքելով հուժեքնս մէջ:

Ուղղակի հմայուած՝ քեզի հետ սկսայ երգել «Յառաջ նա-
հատակ ցեղի անմահներ» մեր անզուգական քայլերգը, զոր
դուն նուիրեցիր Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր քոյրերուդ ու եղբայր-
ներուդ:

Այդ պահուն, համա-Հ.Մ.Ը.Մ.ական Յրդ ընդհանուր բա-
նակումին արժանացած «Արարատեան» կարգը վաւերացու-
ցիր Արարատի սրբազան գագաթին, որուն բոլոր շքեղու-
թիւնը հեռուէն միայն հիացումով դիտած են մեր աչքերը:

Եւ ահա, դուն նուաճեցիր այդ գագաթը բոլորիս համար
եւ Հ.Մ.Ը.Մ.ականի դաւանած ազգային ոգին դրոշմեցիր հոն:

Սիրելի եւ հարազատ Հ.Մ.Ը.Մ.ական կրտսեր եղբայրս,
դուն մեր ցեղի արժանաւոր գաւազը, ուխտդ կատար:

Իմ եղբայրական խրատս է քեզի, ափիդ մէջ պինդ պահէ
Արարատէն բերած քարերէդ մէկը՝ անարդարութեան ճակատ-
տին խփելու համար, եւ մեծ մօրդ արդար ցանկութիւնը մի՛
անտեսեր, որպէսզի քու յաջորդիդ փոքրիկ ափին մէջ եւս զե-
տեղես այդ նուիրական քարը:

Ժիրայր Սարգիսեան ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՕ

Այդ օրը ուշ գիշեր էր, երբ համացանցին վրայ
ուշադրութիւնս գրաւեց այն ե-նամակը, թէ
Հ.Մ.Ը.Մ.ական սկսուտ մը Արարատի գա-
գաթին է: Ու ես սկսայ հետեւիլ քու քայլե-
րուդ, մագլցումիդ եւ նկարագրութիւննե-
րուդ, երրորդ օրը հասնելով Արարատի ձիւնածածկ գագա-
թին, հոն տեսայ Հ.Մ.Ը.Մ.ի պանծալի դրօշը պարզած, սկսու-
տական լրիւ տարագովդ, ծնրադիր՝ աչքդ դրօշին յառած,
Հ.Մ.Ը.Մ.ի երդումը նորոգեցիր: Այդ պահուն ներքին ալեկո-
ծումներով եւ ապրումներով արդէն պղտորած էր տեսողու-
թիւնս:

Հաւատարմութիւն եւ բարոյական յանձնառութիւն

ՔԱ՛ Հ, ՔԱ՛ Հ, ՔԱ՛ Հ...

Յարութ Սրկ. Շերնգեան ԴՊՐԵՎԱՆՔ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

Կեանքը որքան ալ դժուար թուի շատերու, պէտք է
ընդունիլ սակայն, որ ան իր մէջ հաճելի երեսներ ալ
ունի:

Պահ մը մտաբերելով սկսուտական յիշատակներս, մտա-
պատկերիս մէջ կը տեսնեմ կեանքի հետաքրքրական դրուագ
մը, ուր վայրկեանի մը մէջ, պզտիկ խանդարումով մը կացու-

թիւն մը բոլորովին կը փոխուի: Կարծես աշխատող մեքենայի
մը մէջ կտոր մը կ'իյնայ եւ մեքենան կը խանդարէ...: Աւելի
լաւ հասկնալու համար, ուղեղիս յուշարար բաժինին օգնու-
թեան դիմելով՝ պիտի պարզաբանեմ ըսածս:

Մեր մանկութեան տարիներուն, բանակումի մթնոլորտը
խանդավառիչ կը թուէր բոլորիս համար: Զմեռը մեզի համար
տազնապալի վիճակ մը կը ստեղծուէր՝ սպասելով բանակու-
մի թուականը եւ զսպելով մեր ախորժակը: Հետեւաբար,

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՉԱԴՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ



1937. սկաուտ խմբապետներ Պապուզեան եւ Նշան Թիսիւզեան: Լեւոն

Ներսէս Արք. Բախտիկեան (1911-1989) ԱՆՏԻՊ, ԻՇ. ՄԱՍ

Վարչ ութիւնը նախանձախնդիր իր անդամներուն եւ համակիրներուն իմացական զարգացման, նախորդ տարուէն ձեռնարկած զրադարան-ընթերցասրահ կարելի յարմարութիւններով կահաւորելէ ետք, 26 Յունւար 1928 թուակիր իր կարեւոր ազդով կը յայտարարէ, որ Փետրուար մէկէն սկսեալ, ամէն Չորեքշաբթի իրիկուն, ժամը 6էն մինչեւ 8.30, ակումբը բաց պիտի ըլլայ ընթերցանութեան՝ զանազան թերթերու եւ գիրքերու:

Հ.Մ.Ը.Մ-ի անդամ եւ համակիր ազատ են օգտուելու այս առիթէն:

Որոշուած իրիկունը ընթերցանութենէ եւ դասախօսութե-

նէ դուրս ամէն բան արգելուած է:

6 Մարտ 1928 թուակիր նամակով Բերիոյ Թեմի Առաջնորդ Արտաւազդ Մ. Վարդապետ կը գրէ վարչութեան. «Որոշած ըլլալով յառաջիկայ Մարտ 12ին, Երկուշաբթիէն սկսեալ, Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ հսկում կատարել ազօթքի շաբաթով մը, այդ առթիւ կարգապահութեան հսկելու համար կը յանձնարարենք, որ Մարտ 12-16, ամէն իրիկուն ժամը 5.30ին ներկայ ըլլայ 25 հոգինոց սկաուտական խումբ մը, խմբապետի մը առաջնորդութեամբ, հսկելու համար կարգ ու կանոնին:

Լիկ մաշի յանձնախումբը 7 Մարտ 1928 թուակիր շրջաբերականով մը ժողովի կը հրաւիրէ Իւնիոն Սփորթիվը, Սուլթանիէն, Ուսումնասիրացը, Արարատը, Նուպարեանը եւ Հ.Մ.Ը.Մ-ը՝ «Վերջնական ձեւ ու մարմին տալու առաջադրութեամբ»:

Ժողովը կը գումարուի Մարտ 9ին, Հ.Մ.Ը.Մ-ի ակումբին մէջ, ուր կը կազմուի լիկ մաշի կանոնադիրը, իրաւասութիւն տալով մարմինին գայն գործադրութեան դնելու 1928 Մարտ 11էն սկսեալ:

Հալէպի առաջին խումբին Պէյրութ ղրկուելու փափաքը շատոնց բոյն դրած էր վարչականներու սրտերուն մէջ, բայց այս այցելութեան «փափաքը» որքան ալ «աւելի ուժեղ» եղած ըլլար Պէյրութի համար՝ կը ձգձգուէր աւելի յարմար ժամանակի մը հաշուոյն: Սակայն, Հալէպ ա'լ համբերութիւնը հատած կը գրէ. «Ամէն պարագայի տակ, մեր խումբը ամէն գնով Պէյրութ ղրկել որոշած ենք» ու կը հրապարակէ հետեւեալ ազդը 10 Ապրիլ թուակիր.

«Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի մասնաճիւղի առաջին խումբը յառաջիկայ Ուրբաթ, 13 Ապրիլի առաւօտեան կը մեկնի Պէյրութ:

«Երկու քոյր մասնաճիւղերուն ախոյեանական մրցումը տեղի պիտի ունենայ 15 Ապրիլ, Նոր Կիրակիին»:

Այս առթիւ Խաչատուր Շահին բաժակ մը կը նուիրէ յաղթական խումբին: Հալէպի վարչութիւնը Ապրիլ 22ի յետմիջօրէին Հ.Մ.Ը.Մ-ի դաշտին վրայ կը կատարէ մրցումներ՝ Հ.Մ.Ը.Մ-ի եւ Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական խումբերուն միջեւ, սկաուտական Ա. խումբ «ընտրողական մրցում» անունին տակ ու կը հրահանգուի, որ «Երկրորդ խումբի եւ նորեկ սկաուտ Ֆուլթպոլիստները ներկայ գտնուին դաշտին վրայ»:

Իսկ յաջորդ շաբաթ, 29 Ապրիլին «Հ.Մ.Ը.Մ-ի բոլոր սկաուտները Բ. կարգ, նորընծայ եւ նոր արձանագրուած՝ ակումբ կը հրաւիրուին» եւ նոյն օրը «Հ.Մ.Ը.Մ-ի բոլոր անդամները, առաւօտեան ժամը 5ին, դաշտ կը հրաւիրուին որպէսզի կատարուի Ֆուլթպոլի դաշտի մաքրութիւն եւ պաս-

քեթպուլի դաշտի շինություն:

«Ամէն անդամ, եթէ կարելի է, իրեն հետ գործիք մը բերէ մաքրութեան համար» (Շրջաբերական, 25 Ապրիլ 1928):

2 Մայիս 1928 թուակիր շրջաբերականով ընդհանուր ժողովի կը հրաւիրուին «բոլոր անդամները» 13 Մայիսին:

Ժողովին, վարչութեան ատենապետ Լուտեր Մասպանաճեան «ամփոփ տեղեկութիւն կու տայ» եւ կը պարզէ «դժուարութիւնները», զորս կը յարուցանեն ֆութպուլի խումբերը: Մասպանաճեան իր գեկուցումին մէջ կը շեշտէ սկաուտական շարքերու կարեւորութիւնը եւ անոնց ջամբուելիք դաստիարակութեան անհրաժեշտութիւնը, անշուշտ այն համոզումով, որ հետագային սկաուտական շարքերէն յառաջացած ֆութպուլիստներն ու մարզիկները նուազ դժուարաշարժ չպիտի ըլլան:

Լուտեր Մասպանաճեանի գեկուցումէն կը պարզուի, որ լիկ մաշի կազմութեան նախաձեռնողը՝ Հալէպի մասնաճիւղը, «անոր ձախողութեան մէջ որեւէ պատասխանատուութիւն չունի»: Ատենապետը տեղեկութիւն կու տայ նաեւ Հալէպի խումբին Պէյրութ այցելութեան մասին եւ կը շեշտէ «Հալէպի մասնաճիւղին օգտակարութիւնը Հալէպի մէջ, ընդհանրացնելու մարմնամարզի ոգին»:

Մայիս 13ի ընդհանուր անդամական ժողովին վարչութեան անդամ կ'ընտրուին Կոպեռնիկ Մանսուրեան, Գառնիկ Ազիրեան, Խորէն Հեկլաճեան, Սահակ Խաչատուրեան, Լուտեր Մասպանաճեան, Տիգրան Յովակիմեան եւ Փիլիպոս Դերձակեան (Ատենագրութիւն, 13 Մայիս 1928):

Նորընտիր վարչութիւնը, իր առաջին նիստին իսկ, ֆութպուլիստներու խնդիրը լաւագոյն լուծումի բերելու եւ զանոնք ամուր հիմի վրայ դնելու մտահոգութենէն մղուած, կ'որոշէ



1949. Դամասկոսի ֆութպուլի խումբը Յալէպի տողանցքին:

եօթը հոգինոց առժամեայ յանձնախումբ մը կազմել խումբերէն՝ հետեւեալ համեմատութեամբ, Ա. խումբ՝ 3 ներկայացուցիչ, Բ. 2, Գ. 1, Դ. 1:

Վարչութիւնը սիրով կ'ընդառաջէ Ազգ. վարժարանի դիմումին՝ «Հ.Մ.Ը.Մ.ի մասնակցութեամբ ողիմպիականի մը կազմակերպում»ին: Դարձեալ գործի կը լծուի, երբ առաջարկ կու գայ պասքեթպուլի խումբեր կազմելու: Այս առիթով, վարչութիւնը նամակով մը փափաք կը յայտնէ «Կարապետ Ազիլիւբեանին, որպէսզի ստանձնէ այս խումբերու կազմութեան աշխատանքը»: Միւս կողմէ, վարչութիւնը անդամներուն եւ համակիրներու շրջանակին համար 10 Յունիսին կը ծրագրէ եւ կը գործադրէ մեծ պտոյտ մը դէպի Պոսթան փաշա:

Պասքեթպուլի խումբերու խմբապետ Ազիլիւբեան կարճ ժամանակի ընթացքին կ'առաջացնէ չորս խումբեր. այս խումբերը իրենց փորձերը կը կատարեն Սեյլումի դիմաց, Հ.Մ.Ը.Մ.ի դաշտին վրայ: Դաշտ մը, պարզ տափարակ գետին, ո՛չ պատ, ո՛չ ցանկապատ, պասքեթպուլի կողովները շարժական են, ամէն մրցումի կամ փորձի կը հաստատուին եւ յետոյ կը փոխադրուին: Հակառակ այս պայմաններուն, խմբապետը կըրցեր է կազմակերպել խումբեր ու մրցումի դաշտ իջեցնել զանոնք 17 Յունիսին:

Միութեան յառաջդիմութեան համար պահանջ էր «Ֆութպուլի դաշտի անյարմարութիւնը» լուծելը, ուստի, առաջին առիթով կ'որոշուի նամակ մը գրել եւ «խնդրել քաղաքական ժողովէն, որ Ազիլիւբեանի ազգային կալաւածներէն թափուր գետին մը յատկացուի հոն մարզարան մը հաստատելու» (Ատենագրութիւն, 16 Յունիս 1928):

Վարչութիւնը իր հերթական նիստին կը կարդայ Առաջնորդարանէն ստացուած 4



1946. Յալէպի պասքեթպուլի աղջկանց խումբը միջ-մասնաճիւղային 20րդ մարզախաղերուն:

1949. Հայկա քաղաքի եւ Նոր Գիւղի արծուիկները տարեկան իրենց բանակումին, Քեսապի Ուսումնասիրաց Վարժարանին շրջափակը:



Յուլիս 1928 թուակիր նամակը.-

«Ի պատասխան վարչութեանդ 15 Յունիս թուակիր եւ 5 համարաւ գրութեան, որով կը խնդրէիք վարչութեանդ տրամադրել Ազիզիէի ազգապատկան ընդարձակ հողամասը, որ յատկացուած պիտի ըլլայ մարզարանի մը շինութեան եւ կամ թեմիսի դաշտի մը հաստատման, կը փութանք հաղորդելու, որ քաղաքական ժողովը իր վերջնութեան նիստին ձեռնարանքը նկատի առած ըլլալով, արդէն իսկ պէտք եղածը գրած է Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ պատուարժան թաղականութեան, որուն պէտք է ներկայանայ դիւանդ, յիշեալ հողին փոխանցման պայմաններուն տեղեկանալու համար»: Վարչութիւնը պարտականութիւն կու տայ Ազիզեանին եւ Մասպանաճեանին ներկայանալու թաղականութեան:

Սկառտական յանձնախումբը վարչութեան կ'առաջարկէ սկառտական արշաւ մը կազմակերպել դէպի Սուէտիա (Ճեպէլ Սուսա):

Վարչութիւնը սկզբունքով համաձայն ըլլալով, կ'արձանագրէ. «Ընթացք տրուեցաւ իրենց այս առաջարկին, պայմանաւ որ նիւթական եւ բարոյական որեւէ ջանքերով կամ ակնկալութիւն չունենան վարչութեանէս, այլ կատարուի սկառտական յանձնախումբի պատասխանատուութեան տակ» (Ատենագրութիւն, 21 Յուլիս 1928):

Հ.Մ.Լ.Մ.ի Սուրբիոյ եւ Լիբանանի շրջանի առաջին արշաւբանակումն է այս, որ կը կատարուի 12 հոգիով, հսկողութեանը ներքեւ Լուտեր Մասպանաճեանի եւ Կոպեռնիկ Մանսուրեանի:

Սկառտներու ծնողները եւ Հ.Մ.Լ.Մ.ի անդամները որպէսզի անդորր մնան որեւէ մտահոգութենէ, Պիթիաս բանակումի գացող սկառտներուն մասին վարչութիւնը 10 Օգոստոսին կը գեկուցէ թէ՛

«Պիթիասէն պաշտօնապէս ստացուած տեղեկութեանց համաձայն ի վիճակի ենք հրապարակելու թէ՛

«Բոլոր սկառտները, ինչպէս նաեւ անոնց ընկերացողները,

Շաբաթ կէսօրէ ետք, ժամը 4.30ին Պիթիաս հասնելով, տեղացի եւ հոն օդափոխութեան եկողներուն կողմէ ծափերով դիմաւորուած եւ նախապէս պատրաստուած բնակարաններու մէջ տեղաւորուած են: Կիրակի առաւօտ եկեղեցական արարողութենէն վերջ, ժողովուրդին կողմէ պատրաստուած հերիսայով հիւրասիրուած են եւ իրենց երգերով ու զուարթութիւններով բոլորին համակրանքին եւ գուրգուրանքին առարկան եղած են: Բոլորն ալ ողջ-առողջ, ուրախ ու զուարթ, Սուէտիոյ բարձրաբերձ լեռներուն վրայ ճախրած են ու կը ճախրեն»:

Ասիկա ճեպէլ մուսացիներուն համար բացարձակ նորութիւն էր, եւ նորութիւն էր նաեւ առաջին Ֆուլթպոլի խաղը, որ կը խաղցուի ճեպէլ Սուսայի լեռներուն վրայ:

Խտրապէկցիները ոգեւորուած այս բոլորէն, Հայկէպէն Ֆուլթպոլի գնդակ մը կ'ուզեն, եւ երբ կը ստանան, 12 Հոկտեմբեր 1928 թուակիր նամակով կը գրեն.-

«Ստացանք Պետրոս Այնթապլեանէն, ձեր ղրկած 3 Հոկտեմբեր թուակիր նամակն ու Ֆուլթպոլի գնդակը, խորին շնորհակալութիւն:

«Ի հարկէ, բարի նպատակի մը համար սկսուած գործը միշտ յառաջ կ'երթայ անարգել յոյսով ենք որ ձեր ընկերական նամակներն ալ մեզ պիտի քաջալերեն Հ.Մ.Լ.Մ.ի այդ բարձր իտէալին համար:

«Ուրախ ենք ձեզի յայտնելու, որ երեք հոգիով կազմուած Հ.Մ.Լ.Մ.ի իմբալը այսօր 30ի բարձրացած է միմիայն երկու գիւղերու մէջ՝ Պիթիաս եւ Խտրապէկ:

«Պիտի խնդրենք որ Հ.Մ.Լ.Մ.ի ներքին ծրագիր-կանոնագիրին հետ, ղրկէք նաեւ իբր քաջալերանքի միջոց, Հ.Մ.Լ.Մ.ի այդ փոքրիկ նշանները, որպէսզի անդամագրուող ընկերներուն տանք»:

Ամրան ընթացքին, վարչութեան անդամներէ ոմանց քաղաքէն բացակայութեան պատճառով, վարչական նիստերը կը դանդաղին մինչեւ 16 Սեպտեմբեր, երբ տեղի կ'ունենայ անդամական ընդհանուր ժողով: Ատենապետ Կոպեռնիկ Մանսուրեան վարչութեան չորս ամսուան գործունէութեան մասին գեկուցում մը կու տայ. անդամացանկի պատրաստութիւն, ամսալիւմներու գանձում, դասախօսութիւններու շարքի շարունակում Հինգշաբթի օրերը, սկառտական խումբի մը բանակում Սուէտիա՝ Մասպանաճեանի եւ Մանսուրեանի առաջնորդութեամբ, ներկայացում Կոստանեանի հետ համաձայնութեամբ, որ կ'ապահովէ 10 օսմ. ոսկրի զուտ հասոյթ:

(Շար. 25)



ԳՈՐՏՈՊԱՅԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ «ԱՐԱԳԱԾ» ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ



Հայաստան տրրւած անձնական այցելութենէ մը Արժանիին վերադարձի ճամբուն վրայ, վերջերս, Լիբանան այցելեց Հ.Մ.-Լ.Մ.ի Գորտոպայի մասնաճիւղի «Արագած» սկաուտական խումբի անդամներէն քոյր Պէթի Ասլանեան: Քրոջ ներկայութենէն օգտուելով, «Մարզիկ» հանդիպում մը ունեցաւ հետը՝ ծանօթանալու համար մասնաճիւղի աշխատանքներուն:

Քոյր Պէթի Ասլանեան Գորտոպայի գաղութին մասին խօսելով յայտնեց, թէ Գորտոպա կը գտնուի Պուէնոս Այրէսէն 700 քմ. հեռու: Գաղութը, որ կը հաշուէ 4000-5000 հայ, առաւելաբար կեդրոնացած է «Արմենիա» պողոտային վրայ: Մաս մըն ալ կը բնակի «Անդրանիկ» փողոց: Գաղութէն ներս կը գործեն երկու ակումբներ՝ Հ.Յ.Դ.ի եւ Բարեգործականի: Գորտոպա ունի Ս. Գէորգ եկեղեցին, որ Հարաւային Ամերիկայի հնագոյն եկեղեցին է, հիմնուած ըլլալով 1926ին: Եկեղեցւոյ կողքին կը գործէ Սահակ-Մեսրոպ վարժարանը: Առաւօտուն, դպրոց կը յաճախեն տեղացիներ, իսկ յետմիջօրէին՝ հայեր: ՀՕՄ-ի մասնաճիւղը

ունի պարախումբ եւ կը կազմակերպէ շաբաթօրեայ հայերէն դասընթացքներ: Հ.Մ.-Լ.Մ. կը գործէ Հ.Յ.Դ.ի ակումբէն ներս: Գաղութը ունի ռատիոժամի դրուժին: Հ.Յ.Դ.ի ռատիոժամը կը կոչուի «Յաւերժական Հայաստան» եւ կը գործէ Շաբաթ օրերը, կէսօրուան ժամը 1-3: Ռատիոժամը կը փոխանցէ հայկական լուրեր եւ յայտագիրներ: Սփռումը կը կատարուի նախ հայերէնով (կէս ժամ), ապա՝ սպաներէնով:

Գորտոպայի հայ գաղութը ունի բաւական աշխոյժ երիտասարդութիւն, որուն մէկ մասը բոլորուած է Հ.Մ.-Լ.Մ.ի շուրջ: Գորտոպայի մէջ Հ.Մ.-Լ.Մ.ի սկաուտական խումբ մը («Արագած») հիմնուած է 1993ին: Սեպտեմբերին, խումբը



Ապրիլ 24. Գորտոպայի կեդրոնական հրապարակին շուրջ



կ'ըլլայ 18 տարեկան: «Արագած» այսօր կը հաշուէ 60 անդամ, 15՝ պատասխանատուներ: Խումբին ընդհանուր խմբապետն է եղբ. Ակուսթին Անայեան, որ 2010ի ամրան արժանացաւ սկաուտական «Արարատեան» բարձրագոյն կարգին: Խումբին տարեկան կարեւորագոյն ձեռնարկները կը հանդիսանան բանակումները, մէկը՝ ձմեռնային, 4 օր տեւողութեամբ (Յուլիսին), իսկ երկրորդը՝ ամառնային՝ 15օրեայ (Յունուարին, նոր տարուան յաջորդող շաբաթը): Սկաուտներ իրենց հաւաքները կը կատարեն Շաբաթ օրերը, յետմիջօրէի ժամը 3.30-6.30:

Սկաուտական աշխատանքներու կողքին, Հ.Մ.-Ը.Մ-ի Գորտոպայի մասնաճիւղը ունի նաեւ մարզական բաժին: Մասնաճիւղը կը կիրարկէ ֆուլթպոլ, պասքեթպոլ, չմուշկ եւ լող: Տարին անգամ մը, մասնաճիւղին մարզական խումբերը իրենց մասնակցութիւնը կը բերեն Հարաւային Ամերիկայի

Շրջանային Վարչութեան կազմակերպած Նաւասարդեան խաղերուն: Տարբեր առիթներով (Մայիս 28, Հ.Մ.-Ը.Մ-ի տարեդարձ...) մասնաճիւղը կը կազմակերպէ հաւաքներ: Ապրիլ 24ին, Հ.Մ.-Ը.Մ- իր մասնակցութիւնը կը բերէ գաղութին կեդրոնական ձեռնարկին: Ապրիլ 23ի երեկոյեան, սկաուտներ Յեղասպանութեան նիւթով որմագդներ կը փակցնեն քաղաքին պատերուն վրայ եւ տեղացիներուն կը ծանօթացնեն Հայ Դատը:

Քոյր Պէթի Ասլանեան կը յայտնէ, թէ ինք եւ սերնդակիցները կը կազմեն Յեղասպանութեան ճողոպրած հայութեան չորրորդ սերունդը: Հիմնական դժուարութիւնը, զոր կը դիմագրաւեն անոնք, լեզուի հարցն է: «Հայերէն խօսիլը շատ-շատ դժուար է, բայց հիմա զարթօնք մը կայ եւ նոր սերունդին մօտ հայերէն սորվելու մեծ փափաք կայ», կը հաստատէ քոյրը եւ ուրախութեամբ կը նշէ, թէ ինք եւ ընկերուհիները կը հետեւին ՀՕՄ-ի կազմակերպած հայերէնի դասընթացքին:

Քոյրը կը խոստովանի, թէ 2006ի համա-Հ.Մ.-Ը.Մ-ական բանակումը իրեն տուած է հայրենիքին հանդէպ կապուածութիւն մը, որուն իբրեւ արդիւնք՝ ան վերջերս երկու ամսուան այցելութիւն մը տուած է Հայաստան եւ աւելի սերտացուցած է կապը իր արմատներուն եւ հայրենի երկրին հետ: «Ամէն սկաուտ պէտք է մասնակցի համա-Հ.Մ.-Ը.Մ-ական բանակումի եւ ճանչնայ ու կապուի հայրենիքին», կ'եզրակացնէ քոյրը իր գրոյցին աւարտին:



ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԻԱՐՏԻՆ

Գեորգ Թորոյեան
ՊԵՅՐՈՒԹ

Մայիս ամսուան աւարտով, արեւմտեան եւրոպական երկիրներու ախոյեանութիւնները հասան իրենց աւարտին: Ինը ամիս շարունակ խումբերը պայքարեցան պատուաբեր արդիւնքներու ձեռք բերման համար: Մարզիկներ փորձեցին իրենց լաւագոյնը ցուցադրելով մարզասէրներու համակրանքը շահիլ: Լրատուամիջոցները ամէն օր, ամէն վայրկեան հետեւեցան մրցումներուն: Ծանուցումի ընկերութիւններ առիթը չփախցուցին կարելի բոլոր միջոցները օգտագործելու ծանուցում մը ցուցադրելու համար: Այս բոլորը արդէն անցեալ են: Այսօր մնացած են մրցումներուն չոր արդիւնքները եւ անոնց հետեւանքով ստեղծուած դասաւորումները:

ԱՆԳԼԻԱ

Տարեշրջանի սկզբնաւորութենէն իսկ պարզ էր, որ մրցակցութիւնը պիտի ընթանայ Մ. Եունայթըտի, Չելսիի եւ Արսենալի միջեւ: Երբեմնի հսկաներէն Լիվըրփուլ հեռու էր նախորդ տարիներու իր մակարդակէն: Արսենալ տարեշրջանի ընթացքին յաճախ անխմաստ պարտութիւններ կրեց կամ անտեղի հաւասարութիւններ արձանագրեց եւ ախոյեանութեան աւարտէն քանի մը շաբաթ առաջ կորսնցուց իր յոյսերը: Չելսի ամէնէն սուր պայքարը տարաւ, սակայն վճռորոշ մրցումներու ճախողեցաւ: Մ. Եունայթըտ ամէնէն հետեւողական էր եւ յաջողեցաւ տիրանալ տիտղոսին: Մ. Սիթի, որ մեծ ներդրումներ կատարած էր, բաւարարուեցաւ տիրանալով Անգլիոյ բաժակին: Իսկ Լոնտոնի եւ առհասարակ Անգլիոյ սիրուած կազմերէն Ուէսթ Համ հրաժեշտ տուաւ Բարձրագոյն Լիգին: Անոր ընկերացան Պլէքփուլ եւ Պրիմիէրֆամ: Կոլ-սքորըրներ հանդիսացան Քրալուս Թեւէզ եւ Տիմիթրի Պերպալթով՝ 20ական կողով:

ԻՏԱԼԻԱ

Իտալիոյ նախկին ախոյեան Ինթէր եղաւ միակ մրցակիցը



Ա. Սէ. Միլանի: Երկու կազմերը ցուցադրեցին հետեւողական մակարդակի խաղեր: Նախօրի փորձեց պայքարիլ, սակայն չյաջողեցաւ միշտ նոյն մակարդակի վրայ մնալ: Իտալիոյ հսկաներէն Եուվենթուս տակաւին «չէ սթափած» տարիներ առաջ ստացած իր պատիժէն: Ախոյեան հանդիսացաւ Ա. Սէ. Միլան, որ ամբողջ տարեշրջանին արձանագրեց առաւելագոյն յաղթանակները: Լաւագոյն կոլ-սքորըր հանդիսացաւ Իւտինիզէի Տի Նաթալէն, որ նշանակեց 28 կոլ: Պարի, Պրեշիա եւ Իտալիոյ սիրուած ակումբներէն Սամտորիա փոխադրուեցան Բ. դասակարգ:

ՄՊԱՆԻԱ

Տարեշրջանի սկզբնաւորութենէն պարզ էր, որ մրցակցութիւնը սուր պիտի ըլլայ Պարսելոնայի եւ Ռէալ Մատրիտի միջեւ: Պարսելոնա եղաւ անսխալական, իսկ երկու ակումբներուն միջեւ կատարուող մրցումներուն արդիւնքները եղան ի նպաստ Պարսայի: Պարսա-Ռէալ երթի մրցումին յտակ էր Պարսայի թեքնիք գերակայութիւնը, որ թարգմանուեցաւ մեծ յաղթանակով: Վիլարէալ եւ Վալենսիա մրցեցան Չեմփրընզ Լիգի մրցաշարքին տոմս մը ապահովելու: Ալմերիա, Հերքուլէն եւ Տեփորթիւօ Քորունա փոխադրուեցան Բ. դասակարգ: Ախոյեանութեան կոլ-սքորըր հանդիսացաւ Ռէալի յառաջապահ Քրիսթիանօ Թոնալսօ՝ 40 կողով:

ԳԵՐՄԱՆԻԱ

Պորուսիա Տորթմունտ տարեշրջանի սկզբնաւորութենէն իսկ յամառ ու անզիջող պայքարով գրաւեց պարագլուխի դերքը եւ վերջաւորութեան հանդիսացաւ ախոյեան: Անցեալ տարեշրջանի ախոյեան Պ. Միլնիիս երթի մրցումներուն ճախող արդիւնքներ արձանագրելով մրցակցութենէն դուրս մնաց: Ան դարձի մրցումներուն բարեխաւս իր արդիւնքները, բայց արդէն ուշ էր: Պ. Լեւերքուզըն հետապնդեց Տորթմունտ

տը, սակայն չչաջողեցաւ հետեւողական ըլլալ: Շալքէ եւ Շթուլթկարթ շատ թոյլ արդիւնքներ արձանագրեցին եւ հազիւ ազատեցան Բ. դասակարգ փոխադրուելէ: Մինչ Այնթրախթ Ֆրանքֆորթ եւ Ս. Փաուլի ինկան Բ. դասակարգ: Միւնխիխ յառաջապահ Մարիօ Կոմէզ հանդիսացաւ լաւագոյն կող-սքորը՝ 28 կողով:

ՖՐԱՆՍԱ

Վերջին տարիներու

ախոյեան Լիոն այս տարի ձախող ձեւով սկսաւ տարեշրջանը եւ չչաջողեցաւ տիտղոսը պահել: Մարսէյ յամառ պայքար տարաւ, սակայն երբեմն անակնկալ ձախողութիւններ արձանագրեց, ինչ որ պատճառ դարձաւ տիտղոսը կորսնցնելուն: Ախոյեան Լիլ ամբողջ տարեշրջանին մնաց նոյն մակարդակին վրայ: Սոչո, Ռէն, Սէնթ Էթիէն, Փարիզ Սէն Ժերմէն միջակ արդիւնքներով չկրցան նեղել տիտղոսին յաւակնորդ Լիլի կազմը: Լանս եւ Արլէս հրաժեշտ տուին առաջին դասակարգին: Ախոյեանութեան կող-սքորը հանդիսացաւ Լիլի յա-





ռաջապահ սենեկալցի Սոու՝ 22 կողով:

ՀՈՒԱՆՏԱ

Հոլանտայի ախոյեանին անունը վճռուեցաւ վերջին հանգրուանին: Ամբողջ տարեշրջանին մրցակցութիւնը ընթացաւ Փ.Ս.Վ. Այնտհովընի եւ Թվենթէի միջեւ: Անոնց լուռ ու մունջ հետեւեցաւ Ամսթերտամի Այաքսը: Վերջին շաբաթներուն առաջին երկուքը արձանագրեցին ոչ-համոզիչ արդիւնք-

ներ: Վերջին հանգրուանին Այաքսը իր դաշտին վրայ պարտութեան մատնելով՝ առաջին դիրքը գրաւող, անցեալ տարեշրջանի ախոյեան Թվենթէն ո՛չ միայն գրաւեց առաջին դիրքը, այլեւ՝ 30րդ անգամ ըլլալով հանդիսացաւ Հոլանտայի ախոյեան: Վիլէմ Թիլպուրկ եւ Վենյօ փոխադրուեցան Բ. դասակարգ: Պեորն Վլիմնէքս հանդիսացաւ կող-սքորը՝ 23 կողով:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Reservations Yerevan
 32-38, Hanrabedoutian Street,
 Yerevan 375010, Armenia
 Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
 sales@europahotel.am

Studio/AFK&N 2005 PARIS



ԳՆԱՀԱՏԵԼԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆ, ՇՆՈՐՀԱՒՈՐԵԼԻ ԱՇԽԱՏԱՆՔ

(«ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻ ՕՐ» ՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՍԿԱՈՒՏՆԵՐ ԿԸ ՎԵՐԱՆՈՐՈԳԵՆ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԸ ԽԵՂՃՈՒԿ ԲՆԱԿԱՐԱՆԸ)


ՀՄ.Ը.Մ. Պուրճ Համուտի մասնաճիւղի խմբապետական կազմը ընթացիկ տարեշրջանին գաղափարը ունեցաւ «Հայ սկաուտի օր»-ուան առիթով վերաշինել կարիքաւոր հայ ընտանիքի մը խեղճուկ բնակարանը՝ «Գործել բարիք մը ամէն օր» գայլիկական խոստումէն մեկնած: Այս գաղափարը մասնաճիւղին Սկաուտական Խորհուրդին եւ վարչութեան

կողմէ որդեգրուեցաւ, գործերու բաժանում կատարուեցաւ եւ բոլորը ընկերացան աշխատանքի:

Աշխատանքին առաջին հանգրուանը եղաւ պրպտումներ կատարել եւ կարիքաւոր ընտանիք մը գտնել. անմիջապէս դիմուեցաւ Լիբանանահայ Օգնութեան Խաչի ընկերային ծառայողներու բաժնին: Սկաուտներ մասնաճիւղի խմբապետական կազմին եւ Սկաուտական Խորհուրդին հետ գացին եւ տեսան խեղ-

ճուկ տուն մը, որ մէկ սենեակէ կը բաղկանար, շէնքի մը տանիքը, լուացարանը, խոհանոցը եւ քնանալու տեղը միասին էին: Տունը անձրեւէն պաշտպանուած չէր եւ առողջապահական ոչ մէկ տուեալ ունէր:

Այս տեսարանը սկաուտներուն շատ մեծ ցաւ պատճառեց եւ անոնք ուզեցին անմիջապէս փոփոխութիւն մը յառաջացնել յիշեալ ընտանիքի կեանքին մէջ: Սկաուտական կազմը յստակ պատկե-



րացում մը ունէր, սակայն աշխատանքին տարողութիւնը մեծ էր: Աշխատանքը յաջողցնելու համար կարիքը կար օժանդակ ձեռքերու, եւ այդ ձեռքերը շուտով գտնուեցան:

Առաջին հանգրուանին, մասնաճիւղի վարչութեան գործը եղաւ դիմել օժանդակ մարմիններու, ըլլան անոնք անհատներ կամ հաստատութիւններ: Գետնի վրայ գործը մեծ էր, պահանջները շատ էին:

Սկսուածները կատարեցին խեղճուկ տան մաքրութեան աշխատանքը եւ հին գոյքերը թափելով, մասնագէտ անձերու ցուցմունքներով եւ Լուսարարեան եղբայրներու օժանդակութեամբ վերա-

նորոգեցին գայն: Յաջորդեց ներկի բաժինը, կահ-կարասիներու փոխադրութեան աշխատանքը, առտնին գոյքերու ապահովումը եւ, վերջապէս, աշխատանքը հասաւ աւարտին: Կը մնար ընտանիքը ընդունելու բաժինը, աւելի ճիշդը՝ տունը ընտանիքին յանձնելու պահը: Մեղուի պէս աշխատող սկսուածները, որոնք առանց դժգոհելու շուրջ մէկ ամիս տան կապուած աշխատանքներով զբաղեցան, իրենց բոլոր ճիգերը ի գործ դրին, որպէսզի կարենան հայ կարօտեալ ընտանիքի մը անդամներու դէմքին ժպիտը վերադարձնել:

Աշխատանքին յաջողութեան նպաստեցին Հրայր Ֆերմանեան, Լուրս Պէօ-

յիւքեան, Պուրճ Համուտի քաղաքապետութիւնը, Լուսարարեան եղբայրներ, («ՍԱՀԱԼՔՕ»), ԼՕԽը, ԱՅՀԻԼը, Կարապետ Այանեան, երեսփոխան Արթիւր Նազարեան, Մարաշի Հայրենակցական Միութիւնը, «Թոշիպա» հաստատութիւնը, «Պետ էնտ Պետ», Ճորճ Շէօհմէլեան, Յակոբ Այրանեան, Վահէ Չամիչեան, «Տէպէեան» հաստատութիւնը, «Աղասարգիսեան» հաստատութիւնը, չորս հայ երիտասարդներ, Աւօ Ճենանեան, Տաւրոս Սարգիսեան, «Նարսիս եղբարք» հաստատութիւնը, «Արեւ», «Մոտալիթէ» հաստատութիւնը, «Աճէմեան» հաստատութիւնը, «Մոմճեան» հաստատութիւնը, «Սիւլահան» հաստատութիւնը եւ Ճորճ Տէմիրճեան:

Հասաւ աշխատանքին վերջին օրը, վերանորոգուած տան շրջափակը կը վիտար սկսուածներով, որոնք կանուխ ժամերէն ուղղուեցան իրենց վստահուած տունը վերանորոգուած ու բարեգարգուած ձեւով յանձնելու հայ ընտանիքին: Սկսուածներ մեծ ուրախութիւն ապրեցան, երբ կարողացան ընտանիքի զաւակներուն ապահովել առանձին սենեակ եւ հանգստաւէտ անկողին: Անոնց ուրախութիւնը աւելի մեծ եղաւ, երբ ընտանիքին անդամներուն դէմքին վրայ տեսան ժպիտը՝ խառնուած արցունքով...

Կ'արժէ նշել, որ աշխատանքին ընթացքը եւ արդիւնքը ներկայացուեցաւ լիբանանեան պատկերաս-





փրկուի «էլ. Պի. Սի.» կայանէն, մարդասիրական յատուկ յայտագրի մը ընթացքին, որուն հիւրը եղան մասնաճիւղի սկաուտական աշխատանքներուն երկայացուցիչ քոյր Սեդա Պէշլեան, Լոյս Պէօյլեքեան եւ սկաուտ եղբայրներ: Շուրջ կէս ժամուան յայտագիրը առիթ մը եղաւ սկաուտներու բարեսիրական աշխատանքին ընդմէջէն պատկերասփիւռի բազմամիլիոն հատեւողներուն ծանօթացնելու Հ.Մ.Ը.Մ-ը եւ անոր առաքելութիւնը:

րական աշխատանքին ընդմէջէն պատկերասփիւռի բազմամիլիոն հատեւողներուն ծանօթացնելու Հ.Մ.Ը.Մ-ը եւ անոր առաքելութիւնը:

ԳՆԱՇԱՏԱԳԻՐ

Շ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Սկաուտական խորհուրդը կը շնորհաւորէ Շ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Նամուտի մասնաճիւղի սկաուտական կազմը՝ իր Սկաուտական Խորհուրդով, խմբապետութեամբ եւ անդամներով, որոնք մտայղացան իւրայատուկ ձեւով նշել 2011 տարեշրջանի «Շայ սկաուտի օրը»՝ գործադրելով Շ.Մ.Ը.Մ.ի արիական դաւանանքին կետերը, ունենալով սկաուտավայել կեցուածք ու ոգի, չխնայելով որեւէ ձիգ ու ձեռք-ձեռքի տալով՝ անգամ մը եւս փաստելու մեր հանրութեան, թէ Շ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը այն ընտանիքն ու միջավայրն է, ուր կը կերտուի ապագայի արի ու վեհանձն մարդը՝ բարձր պահելով հայ ազգի եւ մարդկութեան սկզբունքները:

Կը մաղթենք յարատեւ յաջողութիւն եւ վերելք:

Շ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL



PAVILLON MONCEAU
PARIS

*Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating / air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.*



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com



ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Հ.Մ.Ը.Մ. «ԱԶԱՏԱՄԱՐՏ»Ը ԱՇԽՈՅԺ ԿԵԱՆՔՈՎ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ԻՐ 35 ԱՄԵԱԿԻՆ

Գեորգ Պետրիկեան ՓԱՍՏԻՆԱ

Նորութիւն մը ըսած պիտի չըլլանք երբ յայտնենք, որ Փաստինայի գաղութը ներկայիս կը պարզէ ծաղկեալ վիճակ:

Խանդավառութիւն կայ ամէն տեղ եւ յատկապէս հայ կեդրոնի հովանին վայելող միութիւններու գործունէութեան մէջ:

Իսկապէս, որ հոս հայութիւնը կ'ապրի կազմակերպ շրջան մը, ուր ընդհանուր գուրգուրանքն ու գիտակցութիւնը վերածուած են գործի, որովհետեւ համախմբուած են հայկական այս բազմութիւններուն զգացումները:

Ուստի, այս բոլորէն մեկնած, կ'ուզենք յիշեցնել, որ յառաջիկայ տարի, 2012ին, 35 տարեկան կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ-ի արեւմտեան ասիերու մեծ ընտանիքին պատկանող Փաստինայի «Ազատամարտ» մասնաճիւղը, որ գաղութէն ներս կը վայելէ արժանի յարգանք, մեծ վստահութիւն, սէր ու համբաւ:

Այս բոլորը նշմարելի են մասնաճիւղին նորընտիր վարչութեան ծրագրումներէն, մարզական եւ սկստակական աշխատանքներէն եւ, անշուշտ, իր հարիւրաւոր անդամներուն մօտ ստեղծուած

խանդավառութենէն եւ հաւաքական ապրումներէն:

Այսպէս, Փաստինայի նոր հայ կեդրոն ունէ այցելող անպայմանօրէն կըրնայ վկայել Հ.Մ.Ը.Մ-ի տեղւոյն մասնաճիւղի պատասխանատուներուն տարած ճիգերուն եւ անոնց մշակած ծրագրերներուն յաջողութեան մասին: Անոնք կըրնան ականատես ըլլալ մասնաճիւղի սեփական մարզադաշտին վրայ մեծ ու փոքր մարզիկ-մարզիկուհիներու մարզական ամէնօրեայ փորձերուն: Միւս կողմէ, խօսիլ Հ.Մ.Ը.Մ-ի «Ազատամարտ» մասնաճիւղին մասին կը նշանակէ անդրադառնալ Փաստինայի գաղութին անցնող աւելի քան երեք տասնամեակներու պատմութեան, ուր բոլորը կըրնան հպարտօրէն վկայել, թէ Հ.Մ.Ը.Մ-ի սկստակական տարագին եւ մարզական շապիկին ներքեւ կայ միութեան մեծ ոգին, որ ոչ միայն կը հոգեփոխէ անդամն ու մարզիկը, գայլիկն ու արի, արեւոյշը, այլ նաեւ՝ կը բարձրացունէ զանոնք, որպէսզի անոնք ալ իրենց կարգին, համաձայն միութեան պատմական նշանաբանին, բարձրացնեն իրենց շրջապատը: Իբրեւ միշտ մօտէն դիտող եւ հետեւող հայ անհատ, եւ յատկապէս՝ իբրեւ ականատես այս միութեան տարիներու վրայ երկարող վարչութիւններու հին ու նոր ծրագրումներուն եւ աշխատանքներուն, կըրնանք հաստատել, որ հակառակ իր շուրջը փոքր-փոքր կարգ մը իրողութիւններու, թերահաւատութեան, ընկրկումներուն եւ երկրի տնտեսական ոչ առողջ իրավիճակին, մասնաճիւղը իբրեւ գոյատեւում, իր անուան շուրջ արդէն տարիներէ ի վեր ստեղծած է անուրանալի համակրանք մը, որ հարազատ արդիւնքն է իր անդամներուն ծառայողական նկարագիրին եւ ծրագրուած ձեռնարկներուն յօժարակամ մասնակցութեան:

Կրկնութեան գնով ըսենք, որ այս բոլորը հաստատելու համար, վերջերս հանդիպում մը ունեցանք մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Պերճ Պետրիկեանի, փոխ ատենապետուհի եւ ծնողական յանձնախումբի պատասխանատու եղբ. Միրան Մարսէլեանի, սկստակականի պատասխանատու եղբ. Ժիրօ Թաթիկեանի եւ մարզականի ներկայացուցիչ քոյր Անիթա Տէրտէրեանի հետ եւ անոնցմէ քաղցեցինք կարգ մը տեղեկութիւններ, զորս կ'ուզենք բաժնեկցել ընթերցողներուն հետ:

Բոլոր պատասխանատուներն ալ կը հաւատան, որ իրենց ծրագրած կամ մտածած իւրաքանչիւր ձեռնարկ իր ետին կանգնած ունի հայեցիութեամբ եւ հայկականութեամբ լեցուն միջոցը:

**ՄԿԱՌԻՏԱԿԱՆ
ՁՄԵՌՆԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄ**

Յո՛ւնուար 2011ի վերջին շաբաթավերջին, մասնակցութեամբ սկաուտական կազմի մեծ ու փոքր գրեթէ բոլոր անդամ-անդամուհիներուն, Հարաւային Քալիֆորնիոյ Հ.Յ.Դ.ի քեմփ-ճամբարին մէջ կազմակերպուեցաւ դաստիարակչական բանակում մը, որուն մասնակից դարձան նաեւ շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղի ըսկաուտներէն խումբ մը:

Այսպէս, աւելի քան 150 անդամներու ներկայութեամբ, յաջող բանակում մը արձանագրուեցաւ միութեան աշխատանքներու ցանկին վրայ:

Սկաուտական կեանքին մէջ արտաակմբային նման նախաձեռնութիւնները, կազմակերպչական եւ դաստիարակչական աշխատանքներու կողքին, իրենց մեծ նպաստը կը բերեն սկաուտական կերպարին զարգացման, անոր նկարագրի բիւրեղացման եւ նոր փորձառութիւններու ձեռք բերման:

Ու հպարտօրէն կարելի է նշել, թէ հոն՝ այդ քանի մը օրուան բանակումին ընթացքին, մասնակիցները իրենց ծրարագրած աշխատանքներուն կողքին, կրկնեցին իրենց հարազատ կանչերն ու երգերը, զանազան խաղերէ ետք նոր ու տարբեր գիտելիքներ ամբարեցին իրենց մտքերուն մէջ, հայրենիքէն հազարաւոր մղոններ հեռու, իրենց սրտերուն մէջ կրկին անգամ նորոգեցին Հայաստանի սէրը, մաքուր ու տիպար հայ եւ քաղաքացի ըլլալու ու մնալու խոստումը տուին ու այս ձեւով հեռու մնացին առօրեայ խաթարուած միջավայրերէն:

**ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ
ԵՒ ԶԻՒՆԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ**

4-5 Մարտի շաբաթավերջին, մասնաճիւղի խմբապետական կազմը՝ թիւով 19 հոգի, «Լէյք Էրոհետ»ի մէջ ունեցաւ դեկավարման նիւթով սեմինար մը, իբրեւ դասախօս ունենալով կազմի անցեալ տարուան ընդհանուր խմբապետ եղբ. Ժիրո Թաթիկեանը եւ ներկայի միաւորի խմբապետ եղբ. Խաչիկ Սահակեանը:

Իրենց գիտելիքներէն եւ տարիներու ընթացքին ձեռք ձգած փորձառութիւններէն մեկնելով, երկու դասախօսներն



Photo Giligia

ալ կազմի անդամ-անդամուհիներուն պարզեցին, բացատրեցին եւ ներկայացուցին միութեան գերագոյն նպատակը, կատարեցին անոր փառաւոր պատմականը եւ անդրադարձան անոր՝ մեր ժողովուրդի կեանքին մէջ ունեցած դերակատարութեան ու ներդրումին:

Երկու պատասխանատուներն ալ շեշտեցին հաւաքաբար հայկական աւանդութիւնը պահելու անհրաժեշտութիւնը, պատասխանատուութեան եւ գիտակցութեան մասին իրենց խօսքերը հիմնաւորեցին յայտնելով, թէ իբրեւ հայ մեր գոյատեւման մեծագոյն միջոցը պահել ու պահպանելն է ազգային մեր արժէքները: Երկօրեայ սեմինարին աւարտին, 6 Մարտին, խմբապետական կազմը միացաւ միութեան սկաուտական կազմի մնացեալ անդամներուն, որոնք «Snow Valley»ի մէջ ձիւնարշակի համար մէկտեղուած էին:

Գայլիկ-արծուիկ, արի-արենոյշ, աւելի քան 50 անդամներ իրենց պատասխանատուներուն անմիջական գուրգուրանքին եւ խնամքին տակ, անկախ պարզ խաղերէն, օր մը ամբողջ վայելեցին բնութեան բարիքներն ու շրջապատի կարելիութիւնները, հաճելի միացնելով կենսականին եւ արտաակմբային յաջող օր մը եւս արձանագրեցին իրենց տարեկան ծրագրիներուն մէջ:

ՆԱԽԱՃԱՇԻ ՁԵՌՆԱՐԿ

Կիրակի, 20 Մարտին, Փասատինայի հայ կեդրոնի սրահին մէջ, ծնողական

յանձնախումբին պատրաստած Փուլի նախաճաշը վայելեցին մեծ ու փոքր անդամներ, համակիրներ եւ աւելի քան հարիւր հիւրեր, որոնք պիւֆէի ձեւով հիւրասիրուեցան նախաճաշի զանազան տեսակի ուտելիքներով:

Ծափահարելի ու մեծապէս զնահատելի աշխատանք մըն է, որ կը տարուի ծնողական յանձնախումբին կողմէ՝ յանուն մասնաճիւղին բարօր կեանքին եւ ծրագրիներուն իրագործման:

**ՄԿԱՌԻՏԱԿԱՆ
ՊԱՇՏՏՆԵՐՈՒ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ**

Կիրակի, 20 Մարտ 2011ին, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան Սկաուտական Խորհուրդի որոշումով, Փասատինայի հայ կեդրոնի Հ.Մ.Ը.Մ.ի մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ «Ազատամարտ» մասնաճիւղի սկաուտական կազմի անդամներու նոր պաշտօններու տուչութեան հանդիսութիւնը:

Ձեռնարկին, մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Պերճ Պետոյեանի եւ վարչական կազմի անդամներու կողքին, ներկայ էին Շրջանային ընդհանուր խմբապետուհի քոյր Թաթին Հինտոյեան եւ փոխ խմբապետ եղբ. Վիգէն Մանուկեան, շրջանի Հ.Յ.Դ. «Լեռնավայր» կոմիտէի ներկայացուցիչ Միսաք Թաթիկեան, մասնաճիւղի մարզիչներ, բարեկամներ եւ աւելի քան հարիւր յիսուն հիւրեր, համակիրներ եւ անդամներ: Հայ կեդրոնի Հ.Մ.Ը.Մ.ի մարզա-



դաշտի պատերուն տակ, նկարահանման իրենց տեսակաւոր գործիքներով ժամանակէն առաջ արդէն լեցուած էին ծնողներ, ազգականներ եւ համակիրներ: Կազմի մեծ ու փոքր անդամներու շարունակական սկաուտական ծափերն ու կանչերը իրապէս որ վարակիչ խանդավառութիւն մը ստեղծած էին սրահէն ներս: Բոլորին կարգապահ շարքերով կատարուեցաւ դրօշակի արարողութիւն, որմէ ետք կազմի ներկայ պատասխանատուներէն եղբայրներ Խաչիկ Սահակեան եւ Նազօ Ծիծաղեան մէկ առ մէկ հրաւիրեցին նոր զնահատագիրներն ու վկայականներ ստացող մեծ ու փոքր անդամները, որոնք սկաուտական յատուկ քայլերով ու կարգապահ շարքերով, իրենց խմբակներու անդամներու ոգեւորիչ ծափերուն ու կանչերուն ընկերակցութեամբ, ստացան վկայագիրներ:

Աւարտին, Շրջանային Սկաուտ-Խորհուրդին անունով խօսք առնելով, խմբապետուհի քոյր Թալին Հինտոյեան շնորհակալեց վկայագիր ստացող քոյրերն ու եղբայրները եւ շեշտեց, որ բոլոր պարգեւատրուողները ծառայած են միութեան կամ իրենց միտքերը լեցուցած են գիտելիքներով եւ այս ձեւով արժանի դարձած են հրապարակային այս զնահատանքին:

Քոյրը աւելցուց, որ «Նման վկայագիրները կամ զնահատականները յաւելեալ պարտք մը կը դնեն ստացողին, որպէսզի ան կրկնակի կերպով աշխատանք տանի՝ յանուն իր մասնաճիւղին վերելքին»:

Քոյրը ներկայացուց նաեւ մասնաճիւղի միաւորի խմբապետի պաշտօնին զանազան մանրամասնութիւնները: Ապա, պաշտօնապէս, մասնաճիւղի միաւորի խմբապետի պաշտօն տալով եղբայրներ Խաչիկ Սահակեանին եւ Նազօ Ծիծաղեանին, նարնջագոյն ուսնոց եւ եռագոյն փողկապ յանձնեց երկուքին:

«Յառաջ նահատակ»ով փակուած այս հանդիսութիւնը անգամ մը եւս եկաւ հաստատելու, որ Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ կը պատրաստուին առաքինի սկաուտներ, ապագայի ղեկավարներ, նուիրումի տէր անձնազոհ երիտասարդ-երիտասարդուհիներ, որոնք նոր



յոյս կը ներշնչեն ո՛չ միայն միութեան, այլեւ համայն ազգին:

Ստորեւ՝ փոխանցողներու եւ պարգեւատրուողներու ցանկը.-

Նորընծայ.- Օրքիտ Տաուտեան, Սթիւ Կարիկեան, Վարազ Պոսնոյեան եւ Գօգօ Պզտիկեան:

Բ. Կարգ.- Արիանա Նազարեան, Սարգիս Տէմիրճեան, Գէորգ Աբրահամեան, Արամ Յակոբ Կարիկեան եւ Նանօր Յինծալեան:

Արծուիկ.- Վանա Պոսնոյեան:

Գայլիկ.- Քրիս Պէքմէզեան:

Յարատեւ ներկայութիւն արձանագրած.- Վանի Տէմիրճեան, Արիս Գասպարեան, Մէլրի Ճապարեան եւ Անթրի Յովսէփեան:

«Պատուարժան հայ սկաուտ»ի տիտղոս.- Փաթիլ Տէր Յակոբեան եւ Մեղեղի Փօլատեան:

«Տիպար Արեւոյ».- Նոէլ Անտոնեան, Փաթիլ Մանուկեան, Վահէ Գրիգորեան եւ Արամ Պողոսեան:

Վեցակապետ.- Ալիք Մարսէլեան եւ Մեղրի Մարսէլեան:

Գայլիկ խմբապետ.- Յովսէփ Մարկանեան:

Փոխ առաջնորդ.- Արիանա Նազարեան եւ Անդօ Անտոնեան:

Վարիչ առաջնորդ.- Սարգիս Տէմիրճեան:

Միաւորի խմբապետ.- Խաչիկ Սահակեան եւ Նազօ Ծիծաղեան:

ՄԱՄԵԱՃԻՒՂԻ ՄԱՐԶԻԶՆԵՐՈՒ ՍԵՄԻՆԱՐ

Կիրակի, 20 Մարտ 2011ի կէսօրէ առաջ, վարչութեան ծնողական յանձնախումբին կազմակերպած նախաճաշի

ձեռնարկէն եւ անոր յաջորդած սկաուտական պաշտօններու տուչութեան եւ պարգեւատրումներու հանդիսութեանէն ետք, կէսօրէ ետք ժամը 1ին, Փասատինայի հայ կեդրոնի Հ.Մ.Ը.Մ.ի մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ մասնաճիւղի պասքեթպոլի բոլոր մարզիչներու յատուկ հանդիպում-սեմինար, օրուան դասախօս ունենալով USC համալսարանի պասքեթպոլի խումբի ներկայ գլխաւոր մարզիչ՝ հանրայայտ Քեւրն Օնիլը:

Վարչութեան մարզական յանձնախումբին կողմէ նախաձեռնուած եւ մասնաճիւղի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով հրաւիրուած նման մեծ եւ յայտնի մարզիչ մը խակապէս որ նոր բարենիչ մը կ'արձանագրէր վարչութեան անուան դիմաց:

Ներկայութեամբ մասնաճիւղի շուրջ 25 մարզիչներուն, մարզիչ Օնիլ երեք ժամուան ընթացքին նախ բացատրեց, թէ ի՞նչ ըսել է պասքեթպոլի մարզիչ ըլլալ եւ կամ՝ մարզիկ ինչն՞ է եւ ի՞նչպէս մարզիչ կրնան ըլլալ: Ապա, ան անդրադարձաւ մարզումի ուսուցման ձեւերուն ու մանաւանդ՝ մնայուն փորձերու անհրաժեշտութեան եւ լրջութեան: Տեսականէն անցնելով գործնականի, հիւր մարզիչը պասքեթպոլի դաշտին վրայ, սեմինարին ներկայ մարզիչներուն մարզիչը դառնալով, մօտէն բացատրեց եւ լուսաբանեց այն ինչ որ խօսած կամ ներկայացուցած էր իբրեւ թեքնիք եւ որդեգրման ձեւ: Դասախօսութեան աւարտին, պասքեթպոլի գործնական փորձերուն յաջորդեց հարց-պատասխանի շինիչ բաժինը, որուն ընդմէջէն դրսեւորուեցաւ միութեան նպատակը, պասքեթպոլի կարեւորութիւնը երիտասարդներու մօտ եւ այս խաղին միջոցով մարզիչը միութեանական պահելու անհրաժեշտութիւնը:

Անկասկած, որ մարզիչները այս մեծ մարզիչէն կարողացան ձեռք ձգել լաւ փորձառութիւն, զոր շուտով պիտի կիրարկեն մասնաճիւղի աւելի քան երեսուն երկսեռ խումբերուն մօտ:

Յանուն վարչութեան, պատասխանատու քոյր Անիթա Տէրատրեան Հ.Մ.Ը.Մ.ի նշանը կրող գեղեցիկ յուշանուէր մը յանձնեց հիւր մարզիչին:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԼՄԵԼՈՅԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԻ ԱՌՕՐԵԱՅ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

1 996ին հիմնուած Հ.Մ.Ը.Մ.ի Ալմելոյի մասնաճիւղը կը հանդիսանայ Հոլանտայի տարածքին Հ.Մ.Ը.Մ.ական միակ միաւորը: Ան իր շուրջ կը համախմբէ ստուար թիւ մը երիտասարդներու՝ 177 քոյրեր եւ եղբայրներ, 50ը՝ ըսկաուտներ եւ մարզիկներ, իսկ մնացեալը՝ ոչ-տարագաւոր միութենականներ:

Մասնաճիւղը իր աշխատանքները յառաջ կը տանի չորս յանձնախումբերով (սկաուտական, մարզական, երիտասարդական եւ տիկնանց), որոնք կը ծաւալեն բաւական աշխոյժ գործունէութիւն:

Անցնող տարի, մասնաճիւղը ունեցաւ ընկերային բնոյթի բազմաթիւ ձեռնարկներ.- մարզական եւ սկաուտական հանդէս, միջինք, մայրերու տօն, համբարձման տօն, խոռովածի օր, դաշտագնացութիւն, ամսական դրութեամբ վիճակահանութեան երեկոներ, հայրերու օր, Ս. Մննդեան եւ Զատիկուան պարահանդէսներ, Ս. Խաչի տօնին առիթով թէյասեղան, Նոր Տարուան առիթով մանուկներու ձեռնարկ եւ այլն:

Ապրիլին, մասնաճիւղը իր մասնակցութիւնը բերաւ Հ.Յ.Դ. տեղւոյն «Արամ Մանուկեան» կոմիտէի կազմակերպած Մեծ Եղեռնի ոգեկոչման ձեռնարկին, Տէն Հակ քաղաքին մէջ:

Սկաուտական շարքերը կատարեցին իրենց բնականոն հաւաքները, իւրաքանչիւր ամսուան առաջին եւ երրորդ Կիրակիները, յետմիջօրէի ժամը 2-4:30: Անոնք ունեցան հնգօրեայ դպրոց-բանակում մը՝ Խոր քաղաքին մէջ, իսկ մասնաճիւղէն չորս սկաուտներ եւ իմբպետ մը մասնակցեցան համա-Հ.Մ.Ը.Մ.ական Զրդ ընդհանուր բանակումին, Հայաստան:

Մարզական իմաստով, մասնաճիւղը անցնող տարի շարունակեց մասնակցել Հոլանտայի ֆութպոլի ֆետերասիոնի խաղերուն: Հ.Մ.Ը.Մ. Ալմելօ ունի ֆութպոլի երիտասարդներու երկու, իսկ կրտսերներու (8-13 տարեկան) մէկ խումբ: Փորձերը կը կատարուին երկու շաբաթը անգամ մը, Կիրակի օրերը ժամը 1ին:

Մասնաճիւղը իր աշխատանքները յառաջ տանելու համար, անցնող տարի, գումարեց ծնողական երկու ժողով եւ երիտասարդներու ընդհանուր ժողով մը՝ քաղաքի եկեղեցւոյ սրահին մէջ: Վարչութիւնը ունեցաւ եօթնանդամ կազմ եւ բաղկացաւ հետեւեալ քոյր-եղբայրներէն.-

- Ատենապետուհի՝ քոյր Յասմիկ Օհանեան
- Ատենադպիր՝ եղբ. Օհանէս Օհանէսեան
- Գանձապահ՝ եղբ. Սարգիս Տէր Ղազարեան
- Հաշուապահ՝ եղբ. Ազատ Պօղոսեան
- Խորհրդականներ՝ եղբայրներ Բաֆֆի Ամիրխանեան, Սեւան Կորկիսեան եւ Ասլան Ասլանեան:

20 Փետրուար 2011ին մասնաճիւղը գումարեց անդամա-



կան իր 14րդ ընդհանուր ժողովը եւ միամեայ գործունէութեան համար ընտրեց վարչական նոր կազմ՝ բաղկացած հետեւեալներէն.-

- Ատենապետ՝ եղբ. Ազատ Պօղոսեան
- Ատենադպիր՝ եղբ. Օհանէս Օհանէսեան
- Գանձապահ՝ եղբ. Ասլան Ասլանեան
- Խորհրդականներ՝ քոյր Յասմիկ Օհանեան, եղբայրներ Բաֆֆի Ամիրխանեան, Սեւան Կորկիսեան եւ Սարգիս Տէր Ղազարեան:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

13 Մարտ 2011ին, Երեւանի «Արամ Մանուկեան» կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի 13րդ ընդհանուր ժողովը, որուն աւարտին երկամեայ գործունէութեան Գնահատման համար ընտրուեցաւ հետեւեալ վարչութիւնը.-

Եղբ. Բազարտ Եսայեան- ատենապետ
Եղբ. Ռոմանոս Պետրոսեան- ատենադպիր
Եղբ. Օշին Փիրումեան- գանձապահ
Եղբայրներ Դաւիթ Յակոբեան եւ Ընրի Յարութիւնեան- խորհրդականներ

www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
 www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org
 www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org



«ԼՈՒՌԻՒՆ, ԹԱԳԱՒՈՐԸ ԿԸ ԼՍԷ»

Հ.Մ.Ը.Մ.Ի ՍԿԱՈՒՏՆԵՐԸ ԹԱՏՐՈՆ Կ'ԵՐԹԱՆ

Լոռի Պարագեան ԱՐԹԵՔ

Կիրակի, 10 Ապրիլի առաւօտեան, Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի արի-արեհոյները եւ գայլիկ-արծուիկները իրենց խմբապետներուն ընկերակցութեամբ, շաբաթական իրենց հանդիպումին փոխարէն որոշեցին ներկայ ըլլալ երաժշտախառն թատերական ներկայացումի մը՝ «Լուրիւն, թագաւորը կը լսէ» անունով:

Թատերախաղին ամբողջ նիւթը հիմնուած էր երեւակայութեան վրայ: Թագաւոր մը կար, որ շատ կը սիրէր երաժշտութիւնը եւ կը հրաւիրէր իր սեփական երաժիշտը, որպէսզի նոր յորինումներ կատարէ: Դժբախտաբար, սակայն, ծայր աստիճան բծախնդիր ու տարօրինակ այս թագաւորը երբեք գոհ չէր մնար իրեն հրամցուած երաժշտութենէն:

Յոռսախաբ եղած երաժիշտը հաղորդակցութեան մէջ մտնելով իր մոլուսպին հետ, կ'որոշէ իբրեւ թէ նոր երաժշտութիւն մը ներկայացնել թագաւորին, համոզելով զինք, որ ներկայացուելիք երաժշտութիւնը յորինումն է արտասահմանէն եկած երաժիշտի մը, քանի թագաւորը այն համոզումը ունէր, որ միայն դուրսէն եկած երաժիշտները արժէք ու



որակ կը ներկայացնեն:

Այսպէս, պալատական երաժիշտին մոլուսն կը ծրարտուի իբրեւ դուրսէն եկած երաժիշտ: Տարօրինակը այն է սակայն, որ ներկայացուելիք նոր կտորը ո՛չ բառ, ո՛չ խօսք, ո՛չ ալ երաժշտութիւն ունի, այսինքն՝ լուռ ու անձայն կտոր մըն է:

Ներկայացման ընթացքին երաժիշտը կը ձեւացնէ, թէ կը նուագէ ու կը ղեկավարէ: Թագաւորը շուարած է եւ չի գիտեր ի՞նչպէս հակազդել, բայց որովհետեւ երաժիշտը դուրսէն է, կը ձեւացնէ թէ գոհ է:

Երաժիշտը զինք հեզանքի առարկայ կը դարձնէ եւ թագաւորը ծիծաղելի անձի մը կը վերածուի:

Ի՞նչ ըսել այլեւս, երեւակայութիւնը յաղթանակած է...

Թատերական ներկայացման աւարտին, սկառտները Հ.Մ.Ը.Մ.ական յատուկ ծափերով ողջունեցին թատերգութեան մասնակիցները, իրենց անսահման գոհունակութիւնը յայտնելով: Ապա բեմ բարձրացան, լուսանկարուեցան դերասաններուն հետ, իսկ այս վերջինները սկառտներուն նուիրեցին իրենց կարմիր աֆիշը, որուն վրայ ստորագրեց իւրաքանչիւրը:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԹԷՆՔԻ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹԵԱՄԲ՝

ՆԱԽՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔ

Լոռի Պարագեան ԱՐԹԵՔ

Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի Սկառտական Խորհուրդին նախաձեռնութեամբ, անցնող ամիսներուն տեղի ունեցաւ չորս դասախօսութիւններէ բաղկացած դասընթացք մը, երեքը Մարտ ամսուան եւ չորրորդը Ապրիլի

մէջ: Դասախօսութիւնները տեղի ունեցան Հ.Մ.Ը.Մ.ի սկառտական ակումբէն ներս, մասնակցութեամբ Աթէնքի եւ Գոքինիոյ Սկառտ. Խորհուրդներու անդամ քոյրերու եւ ըսկառտներու ծնողներու: Մասնակիցները դասընթացքներուն հետեւելով անհրաժեշտ գիտելիքներ ստացան, որպէսզի ակումբէն թէ տունէն



ներս օգտակար դառնալու հնարաւորութիւնը ունենան՝ սկստուններուն եւ իրենց զաւակներուն համար:

Հ.Մ.Ը.Մ.Ի Աթէնքի Սկստական Խորհուրդի հրաւերին ընդառաջելով, սկստմբը եկա Յունաստանի Կարմիր Խաչի մասնագէտ ներկայացուցիչ մը՝ Էֆթիխա Սթարամփուլու, որ դասախօսեց անմիջական օգնութեան զանազան կարիքներուն եւ արագ դիմագրաման միջոցներուն մասին: Իւրաքանչիւր դասախօսութիւն երեք ժամուան տեւողութիւն ունէր եւ ընդհանուրին մէջ կ'ընդգրկէր հետեւեալ նիւթերը.- արկածներ, վնասուածքներ, ելեկտրահարութիւն, կտորուածքներ, խեղդամահութիւն ուտելիքի հետեւանքով, ուշք

կորսնցնել, շնչառական ու սրտային բարդութիւններ:

Դասախօսութիւններու շարքի աւարտին, Սկստա. Խորհուրդի կողմէ քոյրեր Ակնէս Սրապեան, Վիքի Մէնէշեան եւ Արշա Մանուկեան Կարմիր Խաչի ներկայացուցիչին նուիրեցին Հ.Մ.Ը.Մ.Ի եռագոյն փողկապը, Գուրն Մինասեանի «Հայկական առակներ» գիրքը եւ հայկական աւանդական ուտելիքներ:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԹԷՆՔԻ ԵՒ ԳՈՔԻՆԻՈՅ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՍՏԻՃԱՆԱԻՈՐՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ

Լոռի Պարագեան ԱԹԷՆՔ

Հ.Մ.Ը.Մ.Ի Յունաստանի Շրջանային խմբապետութեան կազմակերպութեամբ, վերջերս, Գոքինիոյ «Ձաւարեան» սկստմբին մէջ տեղի ունեցաւ Աթէնքի եւ Գոքինիոյ սկստական պատասխանատու աստիճանաւորներու ժողովը, որուն իրենց մասնակցութիւնը բերին սկստական շարժումի բոլոր մարզերու 40 պատասխանատու աստիճանաւորներ՝ գայլիկներու վեցեակապետ-փոխ վեցեակապետներ, արիներու առաջնորդ-

փոխ առաջնորդներ եւ երէցներու տասնապետ-փոխ տասնապետներ: Ներկայ էին նաեւ նաեւ Շրջանային Սկստական Խորհուրդը եւ խմբապետական կազմը:

Ժողովին գլխաւոր նիւթը, այս ամբան, Յուլիս ամսուն կազմակերպուելիք սկստական բանակումն էր, որ կը նախատեսուի կատարել Սալամինայի Գանաքիա շրջանի բանակավայրին մէջ: Բանակումին տրուեցաւ ընդհանուր անուն մը՝ «Ռալի բանակում», տրուած ըլլալով որ ան պիտի յատկանշուի եռանդուն խողերով ու մրցումներով, մէկ խօսքով՝ սկիզբէն մինչեւ վերջ մեծ «ռալի» մը պիտի ըլլայ:

Այս առիթով, Շրջանային խմբապետութեան անդամները մանրամասն բացատրութիւններ տուին բանակումին նպատակին, վայրին, ձեռային աշխատանքներուն եւ մրցումին մասնակցող աստիճանաւորներու թիւին մասին:

Ըստ ծրագրի, բանակավայրին տարածութիւնը ձեւակերպուած պիտի ըլլայ Հայաստանի ու Արցախի աշխարհագրական քարտէսին նմանակով, որպէսզի բանակողները իրենք զիրենք զգան մայր հայրենիքի հողին վրայ: Իւրաքանչիւր խմբաւորումի նպատակն ու թիրախը պիտի ըլլայ փոխադրական միջոցով մը հասնիլ Արարատի կատարին:

Բանակումի աշխատանքներուն ներկայացումը տեղի ունեցաւ արհեստավարժ ձեւով, մասնագիտական ոճով ու մանրամասնութիւններով: Աւելին, միջնորդար ճոխացաւ սկստական երգերով, կանչերով ու նշանախօսքերով: Յատուկ հեռասփռումով ներկայացուեցան նիւթեր, քարտէսներ, ձեռային աշխատանքներու օրինակներ եւ նախորդ բանակումներէն պատկերներ:





Աւարտին, Շրջանային Սկսուողական Խորհուրդի ատենապետ եղբ. Յարութիւն Մանուկեան ներկաները հրաւիրեց կանչերով քաջայերելու բանակումին մասնակիցները: Իր կարգին, Շրջանային խմբապետուհի քոյր Գոհար Ալիանաքեան փոխանցեց Շրջանային ճիւղի խմբապետի աստիճանը՝ եղբայրներ Պետրոս Միքայէլեանին եւ Սերգօ Մովսէսեանին, լիազօրելով զիրենք խորհրդատուական դերով հետեւելու Աթէնքի եւ Գոքինիոյ մասնաճիւղերու արի-արեւունշական եւ երէց-պարմանուհիներու խմբաւորումներու ծրագրած աշխատանքներուն:

Տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:



ê Î² à ô î² Î² Û Ø Æ ú ð ° ² Ú ² ð Þ² ô ö² ð Û Æ Â² È° ð² Û È² Û æ Æ Û



Լոռի Պարագեան ԱԹԵՆՔ

Կիրակի, 8 Մայիսին, Հ.Մ.Ը.Մ-ի Աթէնքի մասնաճիւղին կազմակերպութեամբ տեղի ունեցաւ միօրեայ արշաւ մը դէպի Փարնիթա լեռ: Արշաւին մասնակցեցան մոկլիներ, գայլիկ-արծուիկներ, արի-արեւոյններ, պարմանուհիներ, խմբապետներ եւ մասնաճիւղին Սկսուողական Խորհուրդը իր լրիւ կազմով, ընդհանուր թիւ՝ 65 հոգի:

Փարնիթա լեռան լանջին, արշաւին բացումը կատարուեցաւ Աթէնքի մասնաճիւղի խմբապետ եղբ. Օննիկ Աւագեանի կողմէ: Յաջորդեց դրօշակի արարողութիւն:

Արշաւին ընթացքին, իւրաքանչիւր խմբաւորում իրազօրօծեց իր առանձին ծրագիրն ու յայտագիրը, տարիքային բաժանման համաձայն: Ծրագիրները կը նախատեսէին հետախուզութիւն, հետազօտութիւն, սկսուողական կապեր, ձեռա-



յին աշխատանք, խաղեր եւ այս բոլորը՝ երգերու եւ կանչերու ուրախ մթնոլորտի մը մէջ:

Յատուկ անդրադարձ կատարուեցաւ ամրան ընթացքին

տեղի ունենալիք սկաուտական բանակումին:

Արշալին հետաքրքրական ու դաստիարակչական հաճելի բաժինը կազմեց այն առիթը, որ տրուեցաւ մասնակիցներուն ծանօթանալու բնութեան գեղեցկութեան, ընտելանալու չարքաշութեան ու Ֆիզիքական մարզանքին հետ, ինչ որ մեծապէս օգտակար կը հանդիսանայ սկաուտներու մտային, հոգեկան ու մարմնական պատրաստութեան:

Արշալին մասնակից խմբաւորումները հնարաւորութիւն ունեցան հետեւելու Սկաուտական խորհուրդի քոյրերու նախաձեռնութեան, պատրաստելով ձեռագլին աշխատանք մը, որ կը վերաբերէր ծաղկեփունջերու կազմութեան, լերան լանջէն քաղուած բուրբուրումնաւէտ ծաղիկներով: Ծաղկեփունջերը փո-



խաղրուեցան փոքրիկներուն տուները եւ հրամցուեցան իրենց մայրերուն, օրուան զուգադիպող «Մայրերու օր»ուան առիթով:

Դրօշակի արարողութեամբ վերջ գրտաւ այս յաջող եւ դաստիարակչական բնոյթ ունեցող արշաւը:

ՍՏԱՅԱՆՔ
ԿԻՊՐՈՍԻ ԹԵՄԻ ՀՈՎՈՒԿԱՆ ԿԱՐԳԸ
ԵՒ ԹԵՄԱԿԱՆ ԿԱԶՄԱԴՐՈՒՄԸ
 Խմբագիր՝ Վարուժան Արքեպիսկոպոս
 Հրատարակութիւն Ազգային իշխանութեան Կիպրոս:

'Made from one single slice of natural Australian opal'

Classique®

OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
 123 Clarence Street
 Sydney 2000
 Australia

Phone: +61 2 9290 2199
 fax: +61 2 9262 1630
 Website: www.classiquewatches.com
 Email: Info@classiquewatches.com

ՀԱՅԵԼԻՆԵՐ

Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան
ՊԵՅՐՈՒԹ

Հին ժամանակ, մարդիկ իրենց դէմքը կը տեսնէին հանդարտ ջուրերու մակերեսին վրայ: Այսպէս, անոնք ժամանակի ընթացքին սորվեցան, թէ փայլուն եւ հարթ մակերեսներն են, որ կը ցոլացնեն մարմիններու կերպարանքները:

Հին դարերուն, եգիպտացիները, երբայեցիները, յոյներն ու հռոմէացիները մետաղեայ շերտերը լաւ մը հարթեցին, յղկեցին, այսպէսով անոնք պատրաստեցին «մետաղեայ հայելիներ»: Յոյները հայելի տեսակներ ալ շինեցին՝ գոգաւորի, կորնթարդի նման. անոնք կը գործածուէին շատ մը նպատակներով:

ԺԴ. դարուն սկիզբը, իտալացիներ Վենետիկի մէջ առաջին անգամ շինեցին ապակիէ հայելիներ: Այս հայելիներուն ետեւի կողմը անոնք

արծաթեայ փոշիով ծեփեցին, յետոյ ջնարակեցին, որպէսզի ժամանակի ընթացքին չխաթարուին եւ եւ չթափին անոնք: Հիւսնալի էին այս հայելիները, որոնք միայն պալատականներու կողմէ գործածուեցան: Պատճառը այն էր, որ հայելիներու շրջանակներուն վրայ գետեղուած էին թանկագին քարեր:

Մեր առօրեայ կեանքին մէջ մեծ տեղ կը գրաւեն հայելիներու տեսակները: Կորնթարդ հայելիները իրենց մէջ կը հաւաքեն լայն տարածութիւն, անշուշտ փոքրացնելով գայն: Այս տեսակ հայելիները կը գործածուին փոխադրական միջոցներու մէջ, որպէսզի ետեւի անցուղարձը կարելի ըլլայ տեսնել: Գոգաւոր հայելիները կը կոչուին նաեւ «հսկայ» հայելիներ: Այս տեսակ հայելիները կը գործածուին ընդհանրապէս գուարճու թեան վայրերու մէջ: Մարդիկ այս



հայելիներուն առջեւ գէր ու կարճ կ'երեւին, եւ այս ձեւափոխումը զիրենք շատ կը գուարճացնէ:

«Հայելիկ» կը կոչուին հարթ հայելիներէ կտրուած պզտիկ կտորները, որոնք մէկիկ-մէկիկ կը փակցուին գնդակներու, կերպասներու, կաշիներու, զարդեղէն առարկաներու եւ այլնի վրայ, որպէսզի անոնք աւելի սիրուն եւ աչքառու երեւին:

Առաջին անգամ հնդիկները գործածեցին «հայելիկ»ները, յետոյ արեւելեան միւս բոլոր ժողովուրդները:

Բ ° ö à ð

Շեփորը երաժշտական գործիք մըն է: Ան կը պատկանի պղնձափողային գործիքներուն ընտանիքին: Շեփորը գոյութիւն ունի հնագոյն ժամանակներէն: Հին ժամանակ շեփորը կ'ազդարարէր պատերազմներու սկիզբը կամ վերջը, կը հաղոր-

դէր աւետիս կամ գոյժ: Զուիցերիական շեփորներու տեսակներ կային, որոնց ձայնը կը լրսէր միդոններ հեռու:

Շեփորը գոյութիւն ունի հնագոյն ժամանակներէն: Հին ժամանակ շեփորը կ'ազդարարէր պատերազմներու սկիզբը կամ վերջը, կը հաղոր-





Միջին դարերուն, շեփորները մեծ մասամբ կ'օգտագործուէին տարբեր առիթներու համար՝ արթննալու, քնանալու, ճաշի ժամը ազդարարելու, ժողովի հաւաքուելու, մրցումներու ժամանակ, սկիզբ եւ վերջ: Ժամանակի ընթացքին, շեփորը «լուր ուղարկողի» դերէն կը փոխուի երաժշտական գործիքի եւ մուտք կը գործէ երաժշտական աշ-

խարհ: Ժամանակակից շեփորը ընդգրկուած է նաեւ սիմֆոնիք նուագախումբի կազմին մէջ եւ հանդէս կու գայ որպէս մենակատարող գործիք:

Ճագ երաժշտական ոճին մէջ շեփորը ունի անգնահատելի տեղ ու նշանակութիւն: Նշանաւոր շեփորահարներ են Արթուրո Սանտովալը եւ Տիգրի Կիլեսպիին:



ՃԱՆՉՆԱՆՔ

ՃԷՅՄՍ ՊԱՂԵԱՆ

Ցարդ, աշխարհի միակ հայ տիեզերագրնացը ամերիկահայ Ճէյմս Պաղեանն է: Ճէյմսի մեծ հայրը՝ Գէորգ Պաղեան ծնունդով Արցախէն է, հայրը՝ Ֆիլիփ եղած է օդաչու: Ճէյմս ծնած է 1952ին, Ֆիլատելֆիա: Ան բժշկական գիտութիւններու դոկտոր է: 1980 թուականէն աշխատանքի անցած է Հիուսթընի տիեզերական տարածութեան կառավարման եւ հետազոտման ազգային վարչութեան մէջ (ՆԱՍԱ): 1986ին ստացած է արհեստավարժ երկրաչափի, իսկ 1987ին՝ տիեզերանաւու բժիշկի վկայականներ:



Պաղեան ամերիկացի տիեզերագնացներու խումբին մաս կազմած է 1980 թուականէն: 1986ին ան ընդգրկուած է «Չելէնճըր» աստղանաւու անձնակազմին մէջ, բայց բարեբախտաբար չէ մասնակցած թռիչքին: «Չելէնճըր»ը թռիչքի երկրորդ վայրկեանին աղէտի ենթարկուեցաւ: 1989ին ան մասնակցած է «Տիւքալըրի» աստղանաւու թռիչքին:

Ճէյմս Պաղեան երկրորդ անգամ տիեզերք թռիչք կատարած է 5 Յուլիս 1991ին:

Ան հեղինակ է գիտական շարք մը աշխատասիրութիւններու, որոնք կը վերաբերին մարդկային գործօններու, շրջակայ միջավայրին եւ տիեզերանաւերու մէջ կատարուող բժշկութեան:

Ճէյմս Պաղեան այժմ կը զբաղի բժշկական հետազոտութիւններով:

ԳԻՏԵՐՐ ԹԷ ...

Սիրաքուզա նաւահանգիստը քաղաք մըն է Սիկիլիոյ մէջ: Ն.Ք. հռոմէացիները իրենց նաւատորմիղը շարեցին նաւահանգիստին մէջ եւ քաղաքը պաշարեցին: Յոյն թուաբանագէտ Արքեմիտէս մետաղեայ հսկայ գոգաւոր հայելիներով արեւու ճառագայթները ցոլացուց նաւերուն վրայ եւ յաջողեցաւ այրել զանոնք:

ՀԱՆԵԼՈՒԿ



Ո՞վ է, ի՞նչ է:
Ծառի ճիւղէն
կը կախուիմ,
Երբ հասուննամ

կը փրթիմ,
Պզտիկ գնդակի կը նմանիմ,
Տանձին ընկեր կը կոչուիմ:
(Պատասխանը՝ յաջորդիւ: Նախորդ հանելուկին պատասխանն էր ծայն):



Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

ՍՈՒՏՈՔՈՒ

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | | | 1 | | 2 | | | 3 |
| | 3 | | | 6 | | | 9 | |
| | | 8 | | 9 | | 4 | | |
| 3 | | | 2 | | 5 | | | 6 |
| | 9 | 4 | | | | 5 | 7 | |
| 2 | | | 9 | | 4 | | | 8 |
| | | 3 | | 5 | | 2 | | |
| | 2 | | | 3 | | | | 8 |
| 1 | | | 7 | | 9 | | | 4 |

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկուծով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսինոց իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

Նախորդին լուծումը

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 1 | 4 | 5 | 8 | 7 | 6 | 9 | 3 |
| 9 | 5 | 7 | 6 | 2 | 3 | 8 | 4 | 1 |
| 6 | 8 | 3 | 9 | 4 | 1 | 2 | 5 | 7 |
| 4 | 3 | 1 | 7 | 6 | 9 | 5 | 8 | 2 |
| 7 | 2 | 5 | 4 | 3 | 8 | 1 | 6 | 9 |
| 8 | 6 | 9 | 2 | 1 | 5 | 3 | 7 | 4 |
| 3 | 9 | 2 | 8 | 5 | 4 | 7 | 1 | 6 |
| 5 | 7 | 6 | 1 | 9 | 2 | 4 | 3 | 8 |
| 1 | 4 | 8 | 3 | 7 | 6 | 9 | 2 | 5 |

Պատասխանը՝ յաջորդիւ

**ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԻ ԱՆԴԱՄԱԵՐ
«ՉՆԵՐԱՅԻՆ ՎՈՒՆԸ»**

